

ԼԵՎՈՆ ԱԿԱԳՅԱՆ

ԵՐԿՐԱԲԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК  
СОВЕТ ПО ИСТОРИИ ЕСТЕСТВОЗНАНИЯ И ТЕХНИКИ

ЛЕВОН АВАКЯН

ГЕОЛОГ  
ОВАНЕС КАРАПЕТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԱՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԱՆՑԻ  
ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԼԵՎՈՆ ԱՎԱԳՅԱՆ

ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՎՀՈՎՆԵԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1666

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ՀՐԱՄԱՆԻ ԹՅԱԳԻ  
ԵՐԵՎԱՆ

1975



{ 552 (c 43)  
—  
Ա. 77

Աշխատությունը նվիրված է ականավոր երկրաբան  
Հովհաննես Կարապետյանի կյանքի և գործի տա-  
րեզրությանը: Նրա՝ շուրջ քառասուն տարվա բեղմնավոր  
գործունեությունը մեծ դեր է խաղացել անդրկովկասյան  
հանրապետությունների երկրաբանության և օգտակար  
հանածոների հետազոտման, լեռնա-հանքային արդյու-  
նաբերության վերականգնման ու զարգացման գործում:

Պատասխանատու խմբագիր  
Է. Գ. ՄԱԼԻԿՅԱՆ

20801  
Ա. — — — 90-75  
703 (02) - 75  
© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն. 1975



Հովհաննես Կարապետյան (1875—1943)

«Հովհաննես Կարապետյանը զիտե Կովկասի ընդերքը ինչպես իր բնակարանը: Նա ցուց տվեց քարտեզի վրա,— այսուղ կարելի է արդյունահանել պղինձ, այսուղ՝ քարածով, այսուղ՝ արծար: Այս, այսուղ կզան տառք տարի անց, այսուղ՝ կհասնեն խան տարի նետո: Ինաւկե, այդ բոլորը ես չեմ տեսնի, սակայն, իմ քարերը ցայց կտան մարդկանց նանապարհը»:

Ա. ԹՎԱԼՈՎ

**Ա**կանավոր երկրաբան, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր Հովհաննես Կարապետյանը (1875—1943) Հայաստանի երկրաբանական ծառայության սկզբնավորման շրջանի նշանավոր դեմքերից է: Նա մեծ դեր է խաղացել ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանաժոնների հետազոտման և լեռնա-հանքային արդյունաբերության զարգացման գործում:

Հովհ. Կարապետյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի (1935) և նրա թանգտրանի (1937) հիմնադիրն է: Նա իր բոլոր կարողություններն ու գիտելիքները, իր տաղանդն ու անսպառ եռանդն ի սպառ է դրել երկրաբանական ծառայության զարգացմանը և երիտասարդ կաղերի պատրաստմանը:

Հովհաննես Տիգրանի Կարապետյանը ծնվել է 1875 թ.  
Հունիսի 2-ին Ախալքալաքի գավառական քաղաքում, շքա-  
վորի ընտանիքում։ Նրա հայրը դերձակ էր և իր վաստա-  
կած չնշին գումարով հազիվ էր կարողանում կերակրել իր  
բազմանդամ ընտանիքը։ Նրա մանկությունը և պատանեկու-  
թյունը անցել են կարիքի, զրկանքների մեջ։ Ահա այդ ժանր  
պայմաններն էին գարձել նրա «ամենամեծ դպրոցը», մղել  
նրան դեպի աշխատանք և ուսում։ Գավառական կյանքի մա-  
սին պատկերավոր է գրել Հովհաննեսի համարաշաղացի ու  
մտերիմ ընկեր, անվանի գրող Դերենիկ Դեմիրճյանը։ «Ման-  
կությունս անցավ լիակատար չքավորության մեջ։ Ես իմ ամ-  
բողջ էությամբ պարտական եմ ահա այդ չքավորությանը։ Նա  
էլ եղել է իմ ամենամեծ դպրոցը։ Զքավորությանը ես տալիս  
Եմ խոշոր նշանակություն։ Զքավոր վիճակը ուսուցանում էր,  
ուզի հարթում դեպի այն գաղափարները, որ նախկին սե-  
րունդներին շարժեց դեպի նոր կյանք»<sup>1</sup>։

1882 թ., յոթ տարեկան հասակում, Հովհաննեսը ընդուն-  
վում է Ախալքալաքի հայկական ծխական դպրոցը, որը սա-  
կայն վեց ամիս հետո ցարական կառավարության կողմից  
փակվում է։ Ջրկվելով սովորելու հնարավորությունից և զգա-  
լով ընտանիքի տնտեսական ծանր կացությունը, վաղ հասա-  
կից նա անցավ աշխատանքի, ինչպես ինքն է հետագայում  
հիշում, վաստակում էր չնշին գումար՝ «քսանհինդ կոպեկ յու-  
րաքանչյուր այժի և տասնհինգ կոպեկ յուրաքանչյուր կովի  
համար»։

Ծուտով փոքրիկ Հովհաննեսը դառնում է դերձակի, խո-  
զանակ պատրաստողի և ապա՝ կազմարարի աշակերտ, սա-  
կայն, այդ արհեստներից և ոչ մեկը չեն գրավում ուսման կա-  
րոտ երեխային։ 1885 թ., երբ նորից վերաբացվում են հայ-  
կական դպրոցները, նա ընդունվում և ավարտում է Ախալ-

1 Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1958, «Հովհեր ու  
խոհեր հայ դրամատուրգիայի ու թատրոնի մասին», էջ 515։

քալաքի մեկասյան ծխական դպրոցը, ապա մտնում  
 քաղաքային ուսուական ուսումնարան, որտեղ սովորում է  
 մինչև վեցերորդ բաժանմունքը (երրորդ դասարան): Լինելով  
 արտակարգ ընդունակ աշակերտ, Հովհաննեսը ուսման տա-  
 րինեղին միշտ արժանացել է գովասանագրերի: Հետագայում,  
 չունենալով ուսումը տեղում շարունակելու ոչ մի հույս, նա  
 զնում է էջմիածին և Խաչատոր Աբովյանի որդու՝ Վարդանի  
 օգնությամբ 1890 թ. ընդունվում է Գևորգյան ճեմարանը:  
 Ճեմարանում սովորելու տարիներին Հովհաննեսը հափշտակ-  
 վում է գրականությամբ և ճանաչվում որպես ա: Ճենառառա-  
 ջագեմ սան: Մի խումբ առաջադեմ սաների հետ նա բացեի-  
 բաց հանդես է գալիս ճեմարանի դեկավարության դեմ: Եկ-  
 դա առիթ է դառնում, որ 1894 թ. նրան, որպես «խոռվարա-  
 րի», մի քանի օր բանտարկելուց հետո, վտարեն ճեմարանից  
 Հովհ. Կարապետյան՝ ճեմարանից վտարման մանրա-  
 մասնությունները հայտնի են դառնում միայն տարիներ հե-  
 տո, ճեմարանի նախկին սաներ Հովհ. Կարապետյանի, Գ.  
 Մկրտչյանի և Հ. Կարա-Մուրգայի՝ «Արշալույս» թերթի խրմ-  
 բագրությանը գրած նամակից<sup>2</sup>: Նամակում մանրամասն  
 տրված է ճեմարանում տիրող բարքերի և տեսուչ Կ. Կոստան-  
 յանցի «Ճանկավարժական գործունեության» նկարագրությու-  
 նը: Սեծ, պատիճ, խուզարկություն ու լրտեսություն—ահա  
 այն միջոցները, որոնցով գործում էին ճեմարանում, սաների  
 մեջ «այծերը» (ըմբոստներ) «գառներից» ջոկելու համար:  
 Նամակից հայտնի է դառնում նաև Հովհ. Կարապետյանի և  
 նրա ընկերների, այսպես կոչված՝ 84 հոգու «դատը», որոնց  
 ոստիկանության հետապնդումներից և անձնական իրերի  
 բոնագրավումից հետո, 1894 թ. նոյեմբերի 27-ին վտարում  
 են էջմիածնի ճեմարանից: Թողնելով էջմիածնը, նա գալիս  
 է Թիֆլիս, ուր մեծ դժվարությունների զնով ընդունվում է  
 Ներսիսյան դպրոցը, որը և ավարտում է 1895 թ. սեպտեմ-  
 բերին և նշանակվում Ախալքալաքում ուսուցիչ: Այստեղ նա

2 Նամակ խմբագրությանը, «Արշալույս», 1905, № 58:

1895—1896 ուսումնական տարում պաշտոնավարում է «Տափի-թաղի» հայոց ծխական արական դպրոցում, գյուղագիրներ Հարություն Ճուղուրյանի և Արշակ Ազապյանի հետ<sup>3</sup>, դասավանդելով թվաբանություն, հայոց լեզու և գրականություն:

1896 թ. օգոստոսին, Կարապետյանը հրավիրվում է Թիֆլիս և նշանակվում Հավլաբարի ծխական դպրոցի ուսուցիչ: Ենտեղ նա պաշտոնավարում է մինչև տարվա վերջը, մինչև ցարական իշխանության կողմից հայկական դպրոցների վերջնական փակելը: Մտիպված նա զբաղվում է մասնավոր դասեր տալով, աշխատակցում է նախ հայկական, ապա նաև ռուսական թերթերին ու ամսագրերին:

Անգործ ուսուցիչը մի ոսւս ընտանիքում պատահմամբ ծանոթանում է լեռնային ինժեներ Բարանովի հետ, որը Թիֆլիս էր ժամանել Կովկասում ոսկի որոնելու նպատակով: Բարանովի հրավերով Հովհաննեսը, որպես թարգմանիչ, մասնակցում է նրա արշավախմբի աշխատանքներին և մոտ մեկ տարի նրա հետ շրջագայում Կովկասի տարբեր շրջաններն ու հեռավոր անկյունները: Ահա այդ որոնող-հետախուզական արշավախումբը նրա համար ունեցավ ճակատագրական նշանակություն, այստեղ նա ստացավ իր առաջին երկրաբանական մկրտությունը:

Հետագա տասը տարիների ընթացքում (1897—1906 թթ.) Հովհաննեսը ամոռանը լինում է Կովկասի բազմաթիվ շրջաններում, ուսումնասիրում նրանց երկրաբանական կառուցվածքը և ընդերքում տարածված օգտակար հանածոները, իսկ ձմռանը մշակում է իր հավաքած հարուստ նյութերը և պարբերաբար զբաղվում ինքնազարգացմամբ, կարդալով երկրաբանությանը և լեռնային գործին նվիրված բազմաթիվ գրքեր

<sup>3</sup> Նշանավոր գյուղագիրներ Հ. Ճուղուրյանի և Ա. Ազապյանի ազգեցության տակ Հովհաննեսը: Կարապետյանը հետագայում գրել է գյուղական կյանքից վերցրած մի քանի պատկերներ, որոնցից արժանի են Գիշատակման «Վայ անձարին» («Մշակ», 1902, № 277) և «Ելեք գնանք, հերիթ մնանք» («Աշխատանք», 1906, № 2): պատմվածքները:

ու ձեռնարկներ։ Ահա այդ տարիներն էլ դարձան չափաղանց բեղմնավոր և արդյունավետ մի ժամանակաշրջան երկուաբանությունից բացի նաև նրա հասարակական, հրապարակախուսական և լուսավորչական գործունեության ծավալման համար։

1898 թ. սկսած նա ղեկավարում է «Կովկասյան բարեկործական ընկերությունը», յոթ տարի անվճար պարապում մեծահասակ կանանց կիրակնօրյա ժողովրդական դպրոցում, բացի այդ շարունակում է աշխատակցել պարբերական մամուկին, տպագրելով տարբեր բնագավառներին նվիրված բազմաթիվ հոդվածներ։ «Կովկասյան հայկական բարեգործական ընկերությունում» որպես գործավար նա աշխատում է մոտ յոթ տարի և վարչության անդամ Մարիամ Թումանյանի<sup>4</sup> հետ նախաձեռնում ու իրականացնում է մի շարք կարևոր միջոցանումներ, որոնք ունենում են գործարար նշանակություն և բարձրացնում ընկերության դերն ու նշանակությունը։ Այդ միջոցանումներից հատկապես արժանի են հիշատակման Հ. Խուզադյանի անունով հիմնած աղջկանց որբանոցի<sup>5</sup> և ձրի ու էժանագին ձաշարանի<sup>6</sup> ստեղծումը։ Այնուհետև Հովհաննես Շովհ։ Կարապետյանի գրած «Զպետք է լինել անտարբեր»<sup>7</sup>, «Տվեր ձեր լուման»<sup>8</sup> և «Կանանց բարեգործական երկու նոր ընկերություն»<sup>9</sup> հոդվածներից երեսում է, որ նա մեծ աշխատանք ու չափականի գրած «Կովկասյան հայկական բարեգործական ընկերություն» գործունեության ծավալման, նյութական միջոցների ընդարձակման և որբ ու չքավոր մանուկների խնամակալության համար։

4 Մ. Թումանյան (1870—1945), մշակութային գործիչ։ Երկար տարիներ նա ունեցել է «Ընկերությունում» ակտիվ մասնակցություն և եղել է Կարապետյանի լավագույն բարեկամը։ Վերջինիս արտասահմանում սովորելու տարիներին ցույց է տվել նյութական օժանդակություն։

5 «Մշակ», 1903, № 233։

6 «Մշակ», 1904, № 252։

7 «Մշակ», 1903, № 65։

8 «Արշալույս», 1905, № 50։

9 «Մշակ», 1906, № 233։

**Հովհաննեսյանը** 1898—1906 թվականների ընթացքում զգալի աշխատանք է կատարում նաև «Հայկական դրամատիկական ընկերությունում»։ Նրա արխիվի նյութերից, ինչպես նաև մի քանի հոդվածներից երևում է, որ նա ունեցել է անմիջական մասնակցություն «Հայկական դրամատիկական ընկերության» ստեղծման, դեկավարման գործում։ Օժաված լինելով գերասանական ունակությամբ, ակտիվ մասնակցություն է ունեցել Հայկական դրամատիկական խմբի և Թիֆլիսի ժողովրդական տանը կից գործող սիրողների ներկայացումներին։ Նրա դեկավարությամբ Ախալքալաքում Հայկական բեմի սիրողների խմբում հանդես է գալիս Մոլիերի «Ակամա ամուսնություն» կատակերգությունում։ Պանկրասի և է. Տեր-Գրիգորյանի «Ծնային կամ կեղծ ճգնավոր» տպեկչում։ Մարգարի գերակատարումներով։ Մեկ տարի անց, նրա դեկավարությամբ Մկրտիչ Մադոյանցի տանը բնմադրվում է ն. Օստրովսկու «Ազգատությունը արատ շէ» դրաման և է. Տեր-Գրիգորյանի «Ի՞նչ անեմ ես» ողկիլը։ Հետաքրքրական է Հիշատակել, որ ներկայացումները ունենում են մեծ հաջողություն և նրանցից ստացված դրամական եկամուտները հատկացվում են աեղի ջուրհակների արհեստանոցի և «Հայկական բարեգործական ընկերության Ախալքալաքի տեղական քաժանմունքի» օգտին։ Հայկական դրամատիկական ընկերության կազմակերպման ու միջոցառումների գնահատմանն է նա նվիրել իր՝ «Թիֆլիսի ժողովարանի ներկայացումների քացման առթիվ»<sup>10</sup> և «Հայոց գրամատիկական ընկերության քննչանուր ժողովը»<sup>11</sup> հոդվածները։

«Новое обозрение»<sup>12</sup>, «Тифлисский листок»<sup>13</sup> և «Тиф-

<sup>10</sup> «Մշակ», 1903, № 220։

<sup>11</sup> «Արշալույս», 1906, № 55։

<sup>12</sup> 1903, № 6330։


<sup>13</sup> 1906, №№ 239, 242, 246, 251, 253։ 1907, №№ 6, 12, 18, 24, 29, 35, 41, 44, 47։

лисская газета»<sup>14</sup>, թերթերում, 1903—1907 թվականներին, «Հայկական դրամա» վերնագրով, Կարապետյանը տպագրելէ քաղմաթիվ հոդվածներ, որոնք նվիրված են առանձին ներկայացումների բեմադրմանը և դերասանների խաղի ընդհանուր գնահատմանը: Այդ հոդվածաշարը իրավամբ «Հայ թատերական թիֆլիսը» ներկայացումների ամփոփագիրն է ուստի պարբերական մամուլում:

Կարապետյանը զգալի գործ է կատարել նաև հայկական ժողովրդական երաժշտության գնահատման ու տարածման բնագավառում: Դեռ մանուկ հասակից նա սիրել է երգն ու երաժշտությունը և հատկապես հագրշտակվել է ժողովրդական երաժշտությամբ: Հայկական երաժշտության հանդեպ ունեցած սերը Հովհաննեսի մոտ էլ ավելի է կրկնապատկվում, երբ էջմիածնի ճեմարանից վտարվելուց հետո, 1894 թ. վերջինին գալիս է թիֆլիս: Այստեղ նա դիմում է ճեմարանի երգեցողության նախկին ուսուցիչ Քրիստափոր Կարա-Մուրզային: Վերջինս շատ բան է անում Հովհաննեսին ու նրա բանհինք ընկերներին Թիֆլիսում տեղավորելու և ներսիսյան դպրոցում ընդունելու համար: Քրիստափոր Կարա-Մուրզայի մահից հետո, նրա երախտապարտ աշակերտը որոշում է իր բարերար ուսուցչի բարի հիշատակը հավերժացնել, նրա շատ ուսանելի կյանքն ու անշահախնդիր գործունեությունը գալիք սերունդներին հաղորդելու միջոցով: Մոտ մեկ տարի, Հովհաննեսը սիրով և նվիրվածությամբ աշխատում է այդ մեծ մարդու տարեգրության վրա, որը առանձին գրքով՝ «Քրիստափոր Կարա-Մուրզա» խորագրով 1904 թ. լույս է տեսնում թիֆլիսում:

Հրապարակախոսական, լուսավորչական և հասարակական գործունեության հետ, Հովհ. Կարապետյանը շի մոռանում իր ամենից ավելի սիրած բնագավառը՝ լեռնային գործը

<sup>14</sup> 1906, №№ 12, 17, 18:



Հովհաննես Կարավակյանի «Քրիստափոր Կարա-Մուրզ»  
մենագրության շապիկը

և երկրաբանությունը: Այդ ուղղությամբ նա շարունակում է իր որոնումները: Հատկապես ամռան ամիսներին լինում է Կովկասի շրջաններում, իսկ այնուհետև, ամփոփելով իր կատարած գործնական աշխատանքների ու հետազոտությունների արդյունքները, հրատարակում է պարբերական մամուլը:

1901 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Հովհ. Կարապետյանի «Կովկասում լեռնային գործի զարգացման համառոտ ակնարկ» անդրանիկ գրքույզը: Ակնարկում առաջին անգամ տրվում է Կովկասի հարուստ ընդերքի օգտակար հանածոների՝ նավթի, մանղանի, պղնձի, քարաղի, քարածխի, ծծմբի, արծաթի, կապարի, երկաթի և ուկու հանքավայրերի տարածումը, նրանց հետախուզման ու արդյունահանման պատմությունն ու վիճակը, տնտեսական նշանակությունը և հեռանկարները: Հեղինակը առաջարկում է ընդարձակել լեռնաշանքային արդյունաբերությունը Կովկասում:

Նա աշխատակցում է «Новое обозрение» թերթին և վարում մամուլի տեսության բաժինը, շարունակում է գրել ամենատարբեր ու հուզող հարցերին նվիրված բազմաթիվ հոդվածներ: «Մշակ», «Արշալույս», «Հաղթանակ», «Կազ», «Тифлисский листок», «Вестник горного дела на Кавказе» և ուրիշ թերթերում ու ամսագրերում:

1906 թ. Կարապետյանը ճանապարհորդում է Արևմտյան թուրքիայում և Հյուսիսային Աֆրիկայում: Լինում է Պոլսում, Ալեքսանդրիայում, Կահիրեում և Նեղոսի հովտի պատմական վայրերում: Շրջադաշտության ընթացքում նա մոտիկից ծանոթանում է Թուրքիայի և Եգիպտոսի քաղաքական և տնտեսական կյանքին: «Ճանապարհորդական տպավորություններ» և «Նամակներ» հոդվածաշարը տպագրվում են «Մշակ»<sup>15</sup>, «Աշ-

15 1906, №№ 202, 203, 204:

КРАТКИЙ ОЧЕРКЪ РАЗВИТИЯ  
ГОРНАГО ДѢЛА  
на  
КАВКАЗѦ.

*O. Карапетяна.*

(Изъ журнала „Кавказский Вѣстникъ“, 1901 г. № 11).

ТИФЛИСЪ  
Скоропечатня М. Мартиросянца, Михайловскій просп., № 81.  
1901.

Հովհաննես Կառավարության կողմէանում լիոնային գործի դարպագման  
համառոտ ակնարկ» գրքի շապիկը

յուատանը<sup>16</sup>, «Երկրի ձայն»<sup>17</sup>, «Черноморский голос»<sup>18</sup> և  
«Черноморские новости»<sup>19</sup> լիրթերում:

Հովհաննես Կարապետյանը թեև լեռնային գործի ու երկրա-  
բանության բնագավառում արդեն ձեռք էր բերել որոշ փորձ,  
սակայն, մասնագիտական կրթություն և տեսական անհրա-



Հովհաննես Կարապետյանը (ձախից) եղիպատում. 1906 թ.

Ժեշտ պատրաստություն շունենալու պատճառով, շատ հա-  
ճախ կանգնում էր լուրջ դժվարությունների առաջ: Ուստի

16 1906, № 43, 44:

17 1906, № 6 և 1907, № 4:

18 1906, № 6:

19 1906, № 15:

որոշում է, ինչ գնով էլ լինի, ստանալ երկրաբանական բարձրագույն կրթություն և 1906 թ. մեկնում է Շվեյցարիա, ընդունվում լողանի ինժեներական դպրոցը: Այստեղ մեծ ուշադրություն է գարձնում հատկապես մաթեմատիկական իր գիտելիքների հարստացման վրա և միաժամանակ, որպես ազատունկնդիր, հաճախում է համալսարանի երկրաբանության դասախոսություններին: Այնուհետև փոխադրվում է Բրյուսելի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային բաժինը, մի շարք գործնական գիտելիքներ ձեռք բերելուց հետո, ընդունվում է Բելգիայի արդյունաբերական խոշոր կենտրոն Մոնս քաղաքի հանքարանական բարձրագույն դպրոցը: Նախ դասախոսություններ է լսում լեռնային գործի մասին, իսկ այնուհետև ականավոր երկրաբան պրոֆ. Կորնեի ղեկավարությամբ անցնում է կիրառական երկրաբանության լրիվ դասընթացը: 1912 թ. Հովհ. Կարապետյանը գերազանցության դիպլոմով ավարտում է Մոնսի դպրոցը և ստանում ինժեներ-երկրաբանի կոչում:

Մոնսի հանքարանական բարձրագույն դպրոցը, որը հրոշակված էր իր ականավոր գիտնական-մանկավարժներով (Մաքե, Կորնե և ուրիշներ), տեսական ու գործնական ուսուցման միասնական դրվածքով, հոյակապ թանգարանով և լաբորատորիաների, կարիքնետների ու արհեստանոցների հիանալի բազայով, արտակարգ ընդունակ ու աշխատասեր Հովհաննեսին տվեց ոչ միայն բազմակողմանի մասնագիտական կրթություն, այլև ինքնուրույն գիտահետազոտական գործունեության լայն հնարավորություն:

Գեուսու ուսման տարիներին, Հովհաննեսը այցելում է Եվրոպայի բազմաթիվ հանքավայրեր ու լեռնա-հանքային ձեռնարկություններ, և ինչպես իր պրոֆեսորների, այնպես էլ առանձին արդյունաբերողների հանձնարարությամբ տանում է գիտահետազոտական ուսումնասիրություններ: Բելգիայի հասարակական աշխատանքների մինիստրության հանձնարարությամբ և պրոֆ. Կորնեի անմիջական ղեկավարությամբ, Կարապետյանը հետազոտել է



Մոնսի Հայութաբանական դպրոցի 1912 թ. շրջանավարտները. Կենարոնում նստած է Հովհ. Կարապետյանը

Քելգիայի ածխի ավազանի մի մասը, որի արդյունքներն ամփոփում է 1912 թ. Մոնսում լույս տեսած «Ուրվագիծ» աշխատության մեջ<sup>20</sup> և որպես ածխի հանքավայրերի հորատման միջոցով հետախուզելու լավագույն փորձ, արտատպվել է Փարիզում հրատարակվող «Տեսություն» ամսագրում<sup>21</sup>: Նույն թվականին Բրյուսելում լույս է տեսնում Հովհ. Կարապետյանի երկրորդ աշխատությունը<sup>22</sup>, որը նույն ածխի ավազանի հարավային մասում կատարած հորատման և հետախուզման ամփոփումն էր:

Հ. Կարապետյանը լինում է նաև գերմանական, ֆրանահական և անգլիական ածխի հանքավայրերում, հավաքում է հսկայական քանակությամբ հարուստ նյութ, որի մշակման հիման վրա առաջ է քաշում տարբեր բնույթի ածխի հանքավայրերի ծագման իր տեսությունը, որը շարադրվում է «Քարածխային շերտերի պառկած և կախված կողերում երկաթի տոկոսային պարունակությունը որպես նրանց առաջացման բնույթի որոշիչ» աշխատության մեջ<sup>23</sup>, որի մասին բելգիական երկրաբանական ընկերության գիխավոր քարտուղար պրոֆ. Պ. Ֆուրմարիերը գրել է, որ գիտության մեջ մինչև օրս այդ հարցին նվիրված ուսումնասիրություն չի եղել, որ Հովհ. Կարապետյանի աշխատությունը լրացնում է այդ բացը<sup>24</sup>: Ընկերությունը, բարձր գնահատելով նրա ծառայությունը գիտության հանդեպ, 1912 թ. հուլիսի 21-ի իր նիստում նրան ընտրում է բելգիական երկրաբանական ընկերության իսկական անդամ:

<sup>20</sup> „Etude des sondages de Wandrez et d'Harmignies“. Extrait des publications de l'Association des Ingenierus de l'Ecole des Mines de Mons.

<sup>21</sup> „Revue Universelle de Mines de la Metallurgie“.

<sup>22</sup> „Les sondages et travaux de recherche dans la partie méridionale du bassin houiller du Hainaut“.

<sup>23</sup> „Recherche sur la proportion de fer existant dans le foit et dans, le mur couches de houille“. Annales de la societe geologique de Belgique, t. 39, 1912, Liege.

<sup>24</sup> „Bulletin de la Société géologique de Belgique“, t. XL.

Տարիներ Հետո, 1928 թ. Կարապետյանը իր ածխագոյացման բնույթի տեսությանը նվիրված զեկուցումով՝ հանդեւէ զալիս Տաշքենդում գումարված երկրաբանների համամիութենական երրորդ համագումարում<sup>25</sup>, ուր հիմնավորում է իր այն կարևոր գիտական եղբակացությունը, որ ածխաշերտի պառկած և կախված կողերում երկաթի տոկոսային պարունակությունը կարևոր միջոց է տվյալ ածխի ավագանի ածխագոյացման բնույթի որոշման համար, որ եթե երկաթի քանակությունը ծածկած կողում՝ ավելի մեծ է, քան պառկած կողում, ապա առանց կասկածի կարելի է հաստատել, որ քարածխի հանքավայրը պատկանում է տեղում առաջացած (առանձին) տիպին:

1912 թ. Մոնսի դպրոցը Հովհ. Կարապետյանին կատարելագործման համար գործուղում է Անգլիա: Միաժամանակ որոշվում է նրան պահել դպրոցում գիտա-մանկավարժական աշխատանքի համար: Սակայն հայրենիքի կարողը և իր հարավատ ժողովրդին ծառացելու բուռն ցանկությունը հանգիստ չէին տալիս նրան, և նա, Մոնսի դպրոցում կարճ ժամանակ աշխատելուց հետո, հրաժարվում է Բելգիայում ընդմիշտ հաստատվելու մտքից և որոշում է վերադառնալ հայրենիք:

**Հովհ.** Կարապետյանը 1913 թ. վերադառնում է հայրենիք, հաստատվում թիֆլիսում և շարունակում է իր երկրաբանական գործունեությունը: Սակայն Անդրկովկասի հարուստ ընդերքի և հետաքրքիր երկրաբանական կառուցվածքի հետազոտման ուղղությամբ նրան չի հաջողվում ծավալել մեծ մասշտաբի որոնող-հետախուզական աշխատանքներ:

1913—1915 թվականների ընթացքում նա մի շարք մասնավոր ձեռնարկատերերի ու արդյունաբերողների հանձնարա-

25 Процентное содержание железа в кровле и подошве каменноугольных пластов, как показатель характера образования их. «Труды III Всесоюзного съезда геологов». Тбилиси, 1929.



Հովհաննես Կարապետյանը՝ երկրաբանների համամիութենական  
3-րդ համագումարում զեկուցելիս. Տաշրինտ, 1928 թ.

բությամբ հետախուզում է Անդրկովկասի մի քանի հանքավայրեր, այդ թվում՝ Բաղաքյանդի ցինկ-կապարի, Թողանլիի հրաբարի, Կասպիի և Թոռուղի կրաքարային մերգելների հանքավայրերը, որոնց արդյունքները ամփոփում է համապատասխան ձեռագիր հաշվետվություններում, իսկ ավելի ուշ՝ տպագիր աշխատություններում<sup>26</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հ. Կարապետյանը «Ծագմական շտարի» և «Ծագմա-արդյունաբերական կոմիտեի» կողմից զործուղվում է Իրան, նախ 1915 թ. Ուրմիա լճի ավազանի սելիստրայի հանքավայրերի ուսումնասիրության համար, իսկ այնուհետև 1916 թ.<sup>27</sup> Կասպից ծովի հարավային ափերի հետախուզման համար, ուր և ուսումնասիրում է պղնձի և կապարի մի քանի հանքավայրեր: Նույն թվականին նա նորից մեկնում է Իրան, Թարումի և Ջինջանի շրջանների պղնձի հանքավայրերի հետախուզման նպատակով:

Հովհ. Կարապետյանը հրավիրվում է Թուրքիստան, ուր հետախուզում է Ջերել կայարանի շրջանի քարածխի հանքավայրը, որը կարև ժամանակից հետո հանձնվում է շահագործման:

1915—1920 թթ. ընթացքում, Հովհ. Կարապետյանը «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» (ԿԱՄԸ) հանձնարարությամբ ղեկավարում է Ալավերդու խմբի հանքավայրերի հետախուզական աշխատանքները: Այդ ժամանակամիջոցում նա մանրամասն ուսումնասիրում է Հյուսիսային Հայաստանի հանքավայրերի (Շամշուդ, Ալավերդի, Շահալի-Ելար, Տանձուտ, Զիբուխլու, Սիսիմաղան և այլն) երկրաբանական կառուցվածքը և հանքայնացման պրոցեսները, հրապարակում է Շամլուղի պղնձի հանքավայրի մանրամասն երկրաբանական քարտեզը և տա-

<sup>26</sup> Минеральные богатства Азербайджана. «Экономическая жизнь Кавказа», 1922, № 5 и Геологическое описание цементных залежей в окрестностях ст. Тауз ЗЖД в Азербайджане. «Азербайджанское нефтяное хозяйство», 1922, № 4.

լիս նրա կառուցվածքի ու տարածված քարատեսակների նկարագրությունը:

Երկրաբանական և որոնող-հետախուզական ուսումնասիրություններին զուգընթաց, Կարապետյանը շարունակում է նաև իր հասարակական, հրապարակախոսական գործունեությունը: 1917 թ. մարտին, նա վճռական ձայնի իրավունքով ընտրվում է Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորների պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտեի անդամ՝ գործոն մասնակցություն է հանդես բերում «Կովկասյան աշխարհագրական ընկերության», «Հայկական աղբագրական ընկերության» և «Հայաստանի տեխնիկական ընկերության» ստեղծմանը:

Անդրկովկասյան հանրապետություններում սովետական կարգերի հաստատվելուց հետո միայն լայնորեն ծավալվում են Հովհաննես Կարապետյանի ստեղծագործական որոնումները, երբ նա դառնում է Անդրկովկասի լեռնահանքային արդյունաբերության վերականգնման ու դարգացման մեծ ու դժվարին գործի իսկական զինվորը: Եվ աջա իրականանում են նրա վաղեմի իդեալը: Կարապետյանը մտավորականության այն ներկայացուցիչներից էր, որն առաջինը ողջունեց սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում: 1921 թ. մայիսին նշանակվում է Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությանը կից գիտատնտեսական կոմիտեի լեռնա-գործարանային սեկցիայի վարիչ, իսկ հունիսին ընտրվում Հայաստանի ժողովուրդական տնտեսության գերագույն խորհրդի նախագահության անդամ և Հայաստանի լեռնա-գործարանային ձեռնարկությունների գլխավոր լիազոր:

1922 թ. մարտին նա նշանակվում է Հայաստանի գիտատեխնիկական խորհրդի նախագահ: Նույն թվականից դառնում է նաև Վրաստանի ժողովրդական տնտեսության գերա-

գույն խորհրդի և Ռուսաստանի երկրաբանական կոմիտեի  
(Գեոլկոմ) Հաշվառման բյուրոյի աշխատակից:

Կառավարությունը և կուսակցությունը Կարապետյանին  
հանձնարարում են մի շարք առաջնահերթ ու անհետաձգելի  
խնդիրներ: Ամենից առաջ անհրաժեշտ էր վերականգնել  
նախկինից ժառանգած շատ խղճուկ ու քայքայված լեռնա-  
հանքային ձեռնարկությունները, կազմակերպել պլանավոր-  
ված երկրաբանական և որոնող-հետախուզական աշխատանք-  
ներ ու երկրին տալ որբան հնարավոր է շատ հանքաքար:

Հովհաննես Կարապետյանը այդ պատասխանատու և շատ  
դժվարին խնդիրների կատարմանը նվիրեց իր ուժերն ու գի-  
տելիքները: Նա իր անսպառ եռանգով ու գործնական մեծ  
փորձով անդնահատելի ծառայություններ է մատուցել Ան-  
դրկովկասի լեռնահնանքային ձեռնարկությունների վերա-  
կանգնման, բազմաթիվ հանքավայրերի հետախուզման, մե-  
տալորգիական արդյունաբերության զարգացման և հանքա-  
յին հումքի նոր պաշարների հայտնաբերման և նղածի օգտա-  
գործման բնագավառներում:

Հմուտ երկրաբանը կազմում է բազմաթիվ հետախուզա-  
կան պլաններ ու նախագծեր, մասնակցում ու հաճախ էլ գլխա-  
վորում է տարբեր հանքավայրերի օգտագործմանը ու գնա-  
հատմանը նվիրված կառավարական հանձնաժողովների աշ-  
խատանքները, գրում է մեծ թվով հաշվետվություններ, եղ-  
րակացություններ ու զեկուցագրեր, ինչպես նաև բազմաթիվ  
հողվածներ Անդրկովկասի երկրաբանական կառուցվածքի ու  
օգտակար հանածոների ուսումնասիրման, երկրաբանական  
ծառայության ու լեռնահնանքային արդյունաբերության առաջ  
դրված խնդիրների շուրջ, որոնք տպագրվում են «Յարա Յօ-  
տոկա», «Экономическая жизнь Кавказа», «Азербайджанское нефтяное хозяйство»,  
«Народное хозяйство Грузии», «Խորհրդային Հայաստան» և այլ թերթերի ու ամ-  
սագրերի էջերում:

Հմուտ երկրաբանի անունը լայնորեն հանաշում է ստա-  
նում Անդրկովկասում: Նրան հրավիրում են Բաքվից, Թիֆլի-

սից, երկանից, նաև երկրի հեռավոր շրջաններից ու ծայրամասերից, ոչ միայն երկրաբանական ծառայության ձեռնարկությունների ու կազմակերպությունների հարցերի, այլև շինարարության, ջրամատակարարման և էլեկտրիֆիկացման հրատապ ու խոշոր հարցերի մշակման ու լուծման նպատակով:

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին Անդրկովկասում Կարապետյանը զբաղվում է Ալավերդու և Ղափանի պղնձի հանքավայրերի, Նախիջևանի քարաղի, Տղվիրուլիի քարածխի, Զաթախի երկաթի և այլ օգտակար հանածոների որոնող-հետախուզական աշխատանքներով, տալիս դրանց տնտեսական ու արդյունաբերական բնութագիրը և հեռանկարները: Այդ հարցերին է նվիրված նրա ընդարձակ հոդվածներից մեկը<sup>27</sup>, որտեղ քննարկվում է Անդրկովկասի հանքային հարստությունների դերն ու ապագան՝ կատված երկրի էլեկտրիֆիկացման պրոբլեմի հետ:

1922 թ. սկզբներին Զագէսի շինարարության կապակցությամբ «Հիդրոստրոյ» տրեստը նրան հանձնարարում է ուսումնասիրել Մծխեթի շրջանի երկրաբանական պայմանները: Տեղում մանրամասն ու բազմակողմանի հետազոտություններ կատարելուց հետո, նա տալիս է իր եզրակացությունը այդ կարևոր կառույցի ինժեներա-երկրաբանական պայմանների և այն տեղական բարձրորակ շինանյութերով ապահովելու մասին: Այս եզրակացությունը Կարապետյանի կատարած առաջին փորձն էր, որը արժանի համբավ բերեց նրան: Հետագա տարիներին նա հրավիրվում է Անդրկովկասի և Միության այլ շրջանների մի շարք խոշոր, բարդ երկրանական պայմաններ ունեցող կառույցներում որպես խորհրդատու:

1922 թ. Հովհաննես Կարապետյանը հետախուզում է Նախիշեանի աղահանքերը և տալիս դրանց ընդհանուր բնութագիր:

27 Будущность горных богатств Кавказских Советских Республик в связи с электрификацией Кавказа. «Экономическая жизнь Кавказа», 1921, № 3.

րլ։ Միաժամանակ առաջարկում է մի շաբթ տեխնիկական միջոցառումներ քարաղի շահագործման պայմանների բարելավման և հանույթի ավելացման համար։ Հետագա մի քանի տարիների ընթացքում նա շարունակում է զբաղվել նախիչելանի աղաճանքերի և քարաղի հարցերով, կազմում պլաններ ու նախագծեր, որոնք վերջնականացնեն քննարկվում և հաստատվում են 1926 թ. Աղրբեջանի ժողանտգերխորհրդի կողմից։

Թիֆլիսում, 1923 թ. մարտի 1-ին, Ալեքսանդր Մյասնիկյանի անմիջական նախաձեռնությամբ<sup>28</sup>, հրավիրվում է Անդրկովկասի տնտեսական խորհրդակցություն, որին ակտիվորեն մասնակցում է նաև Հովհ. Կարապետյանը։ Այդ խորհրդակցությունը հիմնականում քննարկել էր Անդրկովկասի ժողովրդական տնտեսության վերականգնման հարցերը, որոնք հիշատակված էին Լենինի՝ Կովկասի կոմունիստներին հղած հայտնի նամակում կուսակցության առաջ ծառացած խնդիրների մասին<sup>29</sup>։

Դեռևս խորհրդակցության նախօրյակին նա հանդիս է դաւիս մամուլում մի շաբթ հոդվածներով<sup>30</sup>, որոնց մեջ, վեր հանելով Անդրկովկասի հանքային հարստությունների օգտագործման և լեռնա-հանքային արդյունաբերության վերականգնման ու զարգացման հարցերը, անում է նաև մի քանի կարևոր, գործնական նշանակություն ունեցող առաջարկներ։

Անդրկովկասի տնտեսական խորհրդակցությունում անվանի երկրաբանը զեկուցում է «Անդրկովկասի հանքային հարստությունները» թեմայով, որը կազմել էր լեռնային ին-

<sup>28</sup> Լինելով Անդրերկումի պատասխանատու գործիչներից մեկը, Մյասնիկյանը զեկավարում էր Անդրֆեդերացիայի տնտեսական խորհրդի բոլոր աեկցիաների աշխատանքները։

<sup>29</sup> В. И. Ленин, Сочинения, изд. 4, т. 32, стр. 295.

<sup>30</sup> «Заря Востока», 1923, №№ 37, 38, 40, 42, 47.

Ժեներներ լ. Կոնյուշեսկու և Մ. Տրոիցեսկու աշխատակցությամբ։ Զեկուցման «Պղինձ», «Հրաբար», «Երկաթ», «Ցե-մենտ», «Քարաղ», «Շիբ», «Ալիումինում» և «Դիատոմիտ» գլուխները կազմված էին Հովհաննեսկու կողմից։

Նա մասնակցում է «Արդյունաբերության խնդիրները և ձևերը» զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը։ Իր ելույթում կանգ է առնում այն հիմնական խնդիրների ու հարցերի վրա, որոնք անհրաժեշտ են արդյունաբերության վերականգնման և հետագա զարգացման համար։

Անդրկովկասյան տնտեսական խորհրդակցությունում նրա զեկուցումը և ելույթը, ինչպես նաև հանքային հարստությունների օգտագործման և լեռնա-հանքային արդյունաբերության զարգացման համար նրա մշակած միջոցառումները ունեցան շատ կարևոր նշանակություն։ Անդրֆեդերացիայի տնտեսական կյանքում։ Դրանք մեծ հավանության արժանացան խորհրդակցության մասնակիցների և ԱԼ. Մյասնիկյանի կողմից և զարձան Անդրֆեդերացիայի երկրաբանական ծառայության ստեղծման ու հետագա ամրապնդման, լեռնա-հանքային արդյունաբերության զարգացման հոյակապ ծրագիր։

Անդրկովկասյան տնտեսական խորհրդակցությունը իր հերթին Հովհաննեսկու կարապետյանի համար ունեցավ բացառիկ նշանակություն։ Այստեղ էր, որ նա լայն ճանաչում ստացավ Անդրֆեդերացիայի պետական ու կուսակցական զեկավար շրջաններում, այստեղից սկսվեց նրա և ԱԼ. Մյասնիկյանի հետագա զերմ մտերմությունը։ Խորհրդակցության կողմից լրնդունված մեծ պլաններն էին, որ նրան մղեցին դեպի այն դժվարին ու պատասխանատու գործունեությունը, որի մասին նա ասել էր. «Մեր առաջ ձգվում է լայնարձակ զետ, քանդված կամուրջով։ Մեր խնդիրն է գտնել միջոց զետն անցնելու համար։ Քայլքայված է մեր արդյունաբերությունը, այն պետք է վերականգնել, ինչ զնով էլ որ լինի»։

Անդրկովկասյան ֆեդերացիայի տնտեսական շինարարության բնագավառում կարապետյանի գործունեությունը

ակնառու է: Նա առանձնապես մեծ ուժ ու եռանդ է հանդես բերում Զաթախի երկաթի հանքավայրի և թուջի գործարանի վերաբացման գործում, որտեղ ոչ միայն հետախուզում է հանքավայրը, այլև կազմում է այդ լեռնա-հանքային խոշոր ձեռնարկության տնտեսական ու արտադրական պլաններն ու հեռանկարները:

1923 թ. մայիսի 20-ին հանդիսավոր պայմաններում վերաբացվում են Զաթախի երկաթի հանքավայրը և թուջի գործարանը: Անդրերկոմի օրգան «Մարտակոշ» թերթը<sup>31</sup> իր առաջին էջը ամբողջովին նվիրում է այդ կարևոր իրադարձությանը: Հետաքրքրական է հիշատակել, որ թերթում տպագրվում են նաև Հովհաննի հոդվածը և Հակոբ Հակոբյանի «Զաթախ» բանաստեղծությունը: Նրան են նվիրված նաև Հովհաննի կարապետյանի մի շարք հոդվածներ: Նա ուսումնասիրում է Վրաստանի ածխարդյունաբերության վիճակը և Տղվիբուլիի ու Տկվարչելիի քարածխի հանքավայրերի հետախուզման նյութերի հիման վրա տալիս Վրաստանի ածխարդյունահանման հետագա զարգացման ուղիներն ու հեռանկարները: Այդ Հարցերին են նվիրված նրա «Տկվարչելիի քարածխի հանքավայրը», «Անդրֆեդերացիայի քարածխի արդյունաբերությունը», «Տղվիբուլիի ածխահանքերի ներկա վիճակը և նրանց աւագա հեռանկարները», «Քարածխային բրիկետների արտադրությունը Տղվիբուլիում» աշխատանքները: Որպես կառավարական հանձնաժողովի նախագահ, հմուտ երկրաբանը գործուն մասնակցություն է ունենում Տղվիբուլիի ածխահանքերում 1923 թ. մարտի 2-ի առաջացած ստորերկրյա մեծ հրդեհի պատճառների ուսումնասիրման և մի շարք երկրաբանական-տեխնիկական բնույթի միջոցառումների մշակման ուղղությամբ<sup>32</sup>:

1924 թ. Անդրկովկասի ժողկոմիորհը հանձնարարում է

31 «Մարտակոշ», 1923, № 70:

32 Причины подземного пожара в Тквибульских копях, «Народное хозяйство Грузии», 1923, № 13.

նրան Վրաստանում ֆերոմանդանի ձուլման ուսումնասիրությունը և կազմակերպումը: Եռոյն թվականին Անդրկովկասի Կենտգործկոմին առընթեր կազմակերպվում է «Անդրկովկասյան գիտական ասոցիացիան» (ԶնԱ), որի ակտիվ գործիչներից մեկը Հովհաննես էր: Նա այդ թվականին մասնակցում է ասոցիացիայի գիտական արշավախմբին, ուսումնասիրում Հարավ-Օսեթական հնքնավար մարզի երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները, որի արդյունքները տպագրվում են ասոցիացիայի աշխատովթյուններում<sup>33</sup>:

Հենվելով ինչպես գրականության, այնպես էլ իր կատարած հետազոտությունների տվյալների վրա, նա առաջին անգամ տալիս է Հարավ-Օսեթական մարզի երկրաբանության համառոտ ակնարկը, որը բացի ընդհանուր մասից (սահմանները, լեռնագրությունը, կլիման և ջրաբանությունը) ունի «Տեկտոնիկա», «Նստվածքային և հրային ապառներ» գլուխները, ինչպես նաև «Օգտակար հանածոներ» ավելի մանրամասն ուսումնասիրված բաժինը, որը քննության է առնվում մի շարք հանածոների (ածուխ, նավթ, երկաթ, մարգանեց, կապար ու հանքային ջրեր) գործնական նշանակությունը: Հովհաննես 1924 թ. նշանակվում է Ադրբեյջանի ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի խորհրդատու: Ադրբեյջանի ժողովնագերինորդի հանձնարարությամբ նա կազմում է հանրապետության լեռնա-հանքային արդյունաբերության վերականգնման ու զարգացման հնդամյա հեռանկարային պլանը և 1925 թ. մայիսին ներկայացնում է հաստաման: Այդ պլանը մանրամասն արտացոլում է Ադրբեյջանի օգտակար հանածոների հանքավայրերի (բացի նավթից) և լեռնա-հանքային արդյունաբերության վիճակը և նրանց զարգացման հեռանկարները, որտեղ շարադրվում են այն կարևոր

<sup>33</sup> Краткий геологический очерк Автономной Области Юго-Осетии. Материалы по изучению Грузии. Юго-Осетия. «Труды Закавказской Научной Ассоциации», серия 1, вып. 1, Тифлис, 1925.

միջոցառումները, որոնք անհրաժեշտ են պղնձի և հրաքարի (Գետաբեկ, Զիրագիծոր), երկաթի և կորալտի (Վաշքեսան), ցինկի և կապարի (Մեխմանա), ալունիտի (Զագլիկ), հրակայուն կավի (Զարդախլու), բարիտի (Բուզխանա, Դաշալթի), մանգանի (Մոլաշլա), քարաղի, ծծմբի և մկնդեղի (Նախիչևան), ասբետի (Լեռնային Ղարաբաղ), ցեմենտի հումքի (Թառուզ), շինանյութերի և հանքային ջրերի արդյունահանման և որոնող-հետախուզական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Բացի այս հնգամյա հեռանկարային պլանից, Կարապետյանը ըստ տարիների կազմում է նաև գինավոր օգտակար հանածոների առաջնահերթ կատարման համառոտ ծրադիրը, ինչպես նաև ժողոտնտղերի նախագահության որոշման հիման վրա պլանում մտցվում են մի շարք կարևոր լրացումներ:

**Հովհ. Կարապետյանը** 1924 թ. Ալավերդու և Զանգեզուրի լեռնա-հանքային ձեռնարկությունների խորհրդատուն էր, ձեռնարկություններ, որոնք հետազայում միավորվում են «Հայաղինձ» կազմակերպության մեջ: Նախկինից ծանոթ լինելով մեր հանրապետության հյուսիսային և հարավային շրջանների պղնձահանքային կենտրոնների հետ, նա մեծ ուժ ու եռանդ է նվիտաբերում այդ հանքավայրերի խմբի վերականգնման և հետազա որոնող-հետախուզական աշխատանքների ճիշտ կազմակերպման ուղղությամբ: Ահա այստեղ ավելի լայնորեն են զրակորպում նրա տեսական ու գործնական գիտելիքների, խոսքի ու գործի միասնությունը:

Կարապետյանը ժամանակավորապես փոխադրվում է Ալավերդու, Շամլուղի և Ղափանի պղնձի հանքավայրերի ստորերկրյա աշխարհը, հանքափորի արտահագուստը հագին, նա օր ու գիշեր շրջում է այդ «կախարդական» աշխարհի հանքախորշերում: Մեծ ոգերությամբ նա շարունակում է իր

դժվարին աշխատանքը, որոնումներն ու հետազոտությունները: Նա խնդիր է զնում, որ շպնտք է զնալ ֆրանսիացիների հետեւց, որոնք տեխնիկակես ոչ ճիշտ, բարեարուսական եւ-չանակներով օգտագործել են միայն հարուստ հանքաքարը, որ անհրաժեշտ է առաջ անցնել և հատուկ ուշադրություն դարձնել որոնողա-հետախուզական աշխատանքների ճիշտ ու խելացի կազմակերպման և ղեկավարման կարևոր գործի վրա:

Արդեն 1930-ական թվականներին Հովհաննեսի կարապետյանը ամփոփում է իր հետազոտությունների արդյունքները և առաջադրում իր նոր, համարձակ պլանը երկրին տասնյակ հաղարավոր տոննա պղինձ տալու համար: Նա հիմնավորում է հրաքարի, պղնձի և ցինկի հանքաքարի համատեղ մշակման, նախկինում հանքավայրերի ոչ ճիշտ շահագործման հետեւանքով թողնված աղքատ հանքաքարի հսկայական պաշարների և նոր, դեռևս չհայտնարելված պաշարների օգտագործման հարցերը:

«Ալավերդին ծխացել է, ծխում է և պետք է ծխա».—ասել է նա ի պատասխան այն կարծիքի, որ Հյուսիսային Հայաստանի պղնձի հանքանյութի պաշարները սպառվում են, իսկ Ալավերդին կանգնած է փակման առաջ:

Նա մշակում է նաև Հայաստանի պղնձի արդյունաբերության վիճակի և զարգացման հեռանկարների հետ կապված բոլոր հարցերը, կազմում հանրապետության առաջին հնգամյա պլանի համապատասխան թվերը և իրար հետեւց հրապարակում է այդ թեմային վերաբերող բազմաթիվ հոդվածներ:

Հմուտ երկրաբանը զիտեր «ընդերքի շունչը և նրա զարկերակի զարկը», Հայաստանի պղնձահանքերի կառուցվածքը, նրանց ամեն մի հանքախորշը և մարդու աշքից թաքնված հանքամարմինները: Գիտեր երկրի ընդերքի բոլոր գաղտնիքները և «աշքերը փակ տեսնում էր անտեսանելին և ճանաշում ու զգում էր անճանաշելին»: Եվ պատահական չէ, որ դոկտոր Արագետյանին տվել էին «երկրի բժիշկ» անունը, որը բո-



Հովհաննեսյանը (Ճախից նստած) պետական, կուսակցական և իրկրաբանական ծառայության  
ղեկավար աշխատողների հետ. Ալավերդի, 1927 թ.

Դոր ծանր ու դժվարին դեպքերում տալիս էր ճիշտ «ախտորոշում» և այնուհետև «բժշկում էր հիվանդին»՝ հանքավայրին։ Հենց ինքն էլ հաճախ էր կրկնում, թե «երկրաբանը երկրի բժիշկն է, որը պացիենտի առաջին իսկ պահանջի դեպքում պետք է մեկնի վայրը և դնի ախտորոշում»։

**Ս**կսած 1925—1926 թվականներից մեծ աշխատանքներ են տարվում երկրի էլեկտրիֆիկացիայի և ոռոգման խոշոր կառուցումների նախագծումների զիսավոր պլանի կազմման համար, մի պլան, որը հանձարեղ կերպով կանխորոշել էր մեծ լենինը։ Եվ ահա այդ պլանի իրագործման հարցերում իր ակտիվ մասնակցությունն է։ Հանդիս բերում նաև Հովհաննես Կարապետյանը, որը զգալի գործ է կատարում Անդրկովկասի կառուցումների երկրաբանական և ջրամբարների հետազոտման բնագավառում։

1925 թ. Ադրբեյջանի կառավարությունը պրոֆեսոր Լյուդինի ղեկավարությամբ կազմակերպում է գիտական հանձնաժողով՝ հանրապետության ջրային ռեսուրսների ուսումնամիրման համար։ Հատկապես Թարթար գետի ջրերի էներգետիկ նպատակով օգտագործելու հարցը լեռնային ջարաբաղի ինքնավար մարզի ժողկումխորհը հանձնարարում է Հովհաննես Կարապետյանին և Ա. Մելիք-Փաշակին, որոնք և կատարում են նախնական հետազոտությունները։

Նույն թվականի աշնանը, ջրանցքի նախագծման կապակցությամբ, Կարապետյանը ուսումնամիրում է Թարթար գետի միջին հոսանքի մի հատվածը՝ Սարսանգ կամուրջից մինչև Մաղաղիս գյուղի տեղամասը։ Այդ ջրանցքը իր ջրերն առնելու էր Թարթար գետից և սոսոգելու էր լեռնային ջարաբաղի նախալեռնային շրջանների հողերը։

«Պետական էլեկտրոտեխնիկական տրեստի» (ԳԷՏ) հանձնարարությամբ, նա Թարթար գետի վրա նախագծվող էլեկտրակայանի շինարարության կապակցությամբ, հետազո-

տական աշխատանք է կատարում Զայլու-Կովկու տեղամասի սահմաններում և տալիս նրա ջրա-երկրաբանական նկարագրությունը: Այդ ժամանակում հաշվետվությունը աշքի է ընկնում հարցերի լայն ընդուրկումով, ինձեներական երկրաբանության կաշնոր եղրակացություններով (հաշվետվությանը կը ցնած են բազմաթիվ լուսանկարներ և երկրաբանական կտըրվածքներ):

Դաղստանի ժողովրդական տնտեսության կենտրոնական խորհրդի հանձնարարությամբ նա 1927 թ. կատարում է ինձեներա-երկրաբանական աշխատանքներ՝ կապված Դաղստանի էլեկտրիֆիկացիայի և ոռոգման հարցերի հետ, հետազոտում է Ախսին-շալ, Սամոր և Սուլակ գետերի վրա նախագծվող էլեկտրակայանների տեղամասերի երկրաբանական պայմանները<sup>34</sup>:

Վրաստանի Ժողովրդական ժանձնարարությամբ, պետական էլեկտրատեխնիկական տրեստը վերցնում է Թափիարավանի էլեկտրակայանի նախագծման և որոնման աշխատանքը և հրավիրում Կարապետյանին կատարելու երկրաբանական-հետախուզական ուսումնասիրություն: Բայց պայմանի, նա պետք է տար Թափիարավան գետի ավազանի երկրաբանական ակնարկը և հիդրոտեխնիկական կառուցումների ըրա-երկրաբանական պայմանները:

Կարապետյանը մեծ սիրով լծվում է այդ գործին, քանի որ իրեն քաջ ծանոթ էր Զայրենի Զավախիքի ընությունը: Մինչև տարեվերջ նա ավարտում է հետախուզական աշխատանքների նյութերի մշակումը և ներկայացնում տրեստին: Հետագայում այն մասնակի վերամշակումից ու խմբագրումից հետո Ժողովրդական կողմից հանձնվում է տպադրության, որը լույս է տեսնում առանձին գրքով<sup>35</sup>:

<sup>34</sup> ՏԵ՛ս «Красный Дагестан», 1927, № 69.

<sup>35</sup> Геологическое описание Ахалкалакского уезда. Материалы к проекту Танараванской гидроэлектростанции, намеченной близ селения Хертвиси Ахалкалакского уезда в ССР Грузии (с приложением геологической карты), Тифлис, 1929.

Այս նոր գիրքը Ախալքալաքի գավառի երկրաբանական կառուցվածքին նվիրված առաջին ամփոփ աշխատությունն է, որը հիմնականում բաղկացած է երկու մասից: Առաջին մասում տրվում է գավառի երկրաբանական նկարագրությունը (լեռնագրություն, տեկտոնիկա, հրաբխականություն, սելյամբիկ երեսյթներ և օգտակար հանածոներ), իսկ երկրորդ մասում՝ ըրաբերությունը, ըստ որում բնութագրվում են լճերը (Թափարավան, Թումանզյոլ, Մաղաթափա, Բուղդաշեն, Օռովկա, Խանչալի, Վաշիան, Զրես և Խողափին), գետերը (Թափարավան, Կըրխ-բուլաղ, Մեծ ջուր) և քաղցրահամ ու հանքային աղբյուրները, որոնցով այնքան առատ է Զավախքը: Գրքի վերջում բերվում է Ախալքալաքի գավառի երկրաբանական քարտեզը, որն ընդգրկում է Խոնավ լեռներից մինչև Քուռ գետը (արևելքից-արևմուտք) և Ցիխիսչղարի լեռներից մինչև Չալդիրի լեռները (Հյուսիսից-Հարավ) ընկած տարածությունը:

Հովհ. Կարապետյանը գործունյա մասնակցություն է հանդիս բերում Հայաստանում նախագծվող էներգետիկ և ոռոգիչ շինարարության մեծ պլանի կենսագործման գործում:

1927—1928 թվականներին նա հետազոտում է Զորագետի վրա կառուցվող էլեկտրակայանի՝ Զորագէսի շինարարության շրա-երկրաբանական պայմանները և տալիս խիստ բարդ պայմաններ ունեցող այդ մեծ կառուցիչ գնահատականը: Հետաքրքրական է Ցիշատակել, որ տեղում կատարած դաշտային հետազոտությունների ժամանակ, նրա ուղեկիցներն են եղել իր վաղեմի բարեկամներ, նախագծի հեղինակ, անվանի էներգետիկ Հովհանի Տեր-Աստվածատրյանը և ականավոր գրող Մարիետա Շահինյանը: Վերջինս դեռ 1926 թ. Թիֆլիսում հաճախ այցելել է Հ. Կարապետյանին, ստացել նրանից իրեն հետաքրքրող մասնագիտական հարցերի շուրջը խորհրդական ու տեղեկություններ: Իսկ 1927—1930 թթ., ինչպես ինքն է բնութագրել, «այդ շորս փոթորկալի տարիներին», երբ Շահինյանը քոլագիրանում աշխատում էր «Հիդրոցենտրալ» վեպի վրա, ել ավելի մտերմություն է հաստա-

տում Կարապետյանի հետ և նրա ուղեկցությամբ շրջադայում  
կոռվա շքնար լեռնաշխարհում:

Մեծ գրողը Հովհաննես Կարապետյանին բնութագրել է որպես  
Հայաւոանի ամենափնտիք գործիչներից մեկը, «Ես  
նրա շատ պատմություններն եմ լսել լեռներում, խարույկի  
մոտ զիշերելիս, վրացական գյուղական պանդոկներում, լեռ-  
ներում կատարած անթիվ էքսկուրսիաների ժամանակ, երբ  
ևս մասնակցում էի նրա զեկավարած երկրաբանական հետա-  
զոտություններին»<sup>36</sup>:

1927—1930 թվականներին Հովհաննեսի հետա-  
զոտում է Հանրապետության մի շարք կառուցումների՝ երգե-  
սի, Քանաքեռքսի, Ղոերի, Այզր լճի, Սարդարաբաղի ջրանցք-  
ների, Արաքսի և Հրազդանի վրա նախագծվող ամբարտակ-  
ների և մի քանի շրջանային էլեկտրակայանների ու ոռոգիչ  
ջրանցքների ջրա-երկրաբանական պայմանները և ներկայաց-  
նում համապատասխան հաշվետվություններ:

1931—1934 թվականներին նա լինում է Վրաստանում,  
Աղբքանում և ուսումնասիրում Կելասուրի, Բեսկեդկա և Գու-  
միստա (Արփազական ԱՍՍՀ), Նախիչևան-շայ և Կիշ-շայ  
(Աղբքանական ԱՍՀ) և Կսանկա (Հարավ-Օսեթիա) գետերի  
վրա նախագծվող հիդրոտեխնիկական կառուցումների երկ-  
րաբանական պայմանները:

1928 թ. Երևանում, ուսուերեն լեզվով լույս է տեսնում  
Հովհաննես Կարապետյանի «Հայկական ՍՍՌ երկրաբանա-  
կան ակնարկ» գիրքը<sup>37</sup>, որը նրան հանձնարարել էր գրել Հա-  
յաստանի Պետականը, կապված հանրապետության շրջանաց-  
ման, արտադրողական ուժերի բաշխման ու զարգացման և  
Հանքային հումքի ուսուցման օգտագործման հարցերի հետ:  
Այդ աշխատությունը նրա՝ երկար տարիների ընթացքում Հա-

36 Մ. Շանինյան, Հանրապետություն Ավետարական Հայաստանում, Երևան, 1952, էջ 420:

37 Геологический очерк ССР Армении (с прилож. карты полез-  
ных ископаемых и минеральных вод). «Материалы по районирова-  
нию», вып. 1, Эривань, 1928.

յաստանի առանձին շրջանների երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրության արդյունքների համառոտ ամփոփումն է։ Աշխատության սկզբում տրվում է Հայաստանի և Կովկասի երկրաբանությանը նվիրված գրականության ընդհանուր տեսությունը, ապա հանրապետության աշխարհագրական դիրքի և լեռնակրության նկարագրությունը։ Հատուկ զլուխներ նվիրված են տեկտոնական սրբոցեսներին, հրաբխականությանը և շերտակրությանը։ «Հիգրոդրաֆիա» զլուխում տրվում է գետերի, լճերի և ճահիճների համառոտակի նկարագրությունը, մեջ ըերվող աղյուսակից երեսում է, թե հանրապետությունում այն ժամանակ որքան մեծ տարածություն են կազմել ճահիճները։ «Ակնարկի» մեջ ավելի մանրամասն ներկայացված են Հայաստանի օգտակար հանածոները և հանքային ջրերը։ Հեղինակը կանգ է առնում Հատկապես մետաղային հանքավայրերի վրա և տալիս նրանցից զլխավորների նկարագրությունը, որոնք ունեն կամ կարող են ունենալ զործնական ու տնտեսական նշանակություն։ Զգալի տեղ է Հատկացված Ալավերդու, Ղափանի և Հայոց Ճորի պղնձի, հրաքարի ու բազմամետաղ հանքավայրերի երկրաբանական պայմանների, հանքայնացման սրբոցեսների, հանքամարմինների ու հանքաբարերի նկարագրման և պաշարների բնութագրման հարցերին։ Հեղինակը խիստ համառոտակի խոսում է նաև քրոմիտի, մարգանեցի, մոլիբդենի, երկաթի, պեմզայի և բազմաթիվ շինանյութերի մասին։ Գրքի վերջում բերվում է օգտակար հանածոների քարտեզը, որն ունի 12 պայմանական նշաններ (քարածուխ, տորֆ, օբսիդիան, դիատոմիտ, պեմզա, քրոմիտ, մարգանեց, երկաթ, հրաքար, ծծումբ, մոլիբդեն, կապար, պղինձ, ցինկ, հանքեր և գործարաններ, հանքային ջրեր)։ Այն իրավամբ Հայկական ՍՍՀ օգտակար հանածոների (նաև հանքային ջրերի) անդրանիկ քարտեզն է։ «Հայկական ՍՍՀ հանքային աղբյուրները» զլուխը նվիրված է Արգնու, Օղանլարի (Կենսալի), Դիլիջանի և Էլի մի քանի այլ հանքային ջրերի բնութագրմանը և գնահատմանը։

Այստեղ խոսվում է նաև ջերմուկի և Արարատի հիանալի հատկություններ ունեցող հանքային ջրերի օգտագործման, ինչպես և բազմաթիվ այլ հանքային աղբյուրների հետազոտման հարցերի մասին։ Աշխատության այդ գլուխը հրատարակվում է նույն թվականին։

Հայաստանի հանքային ջրերի հարցով Կարապետյանը սկսել է զբաղվել 1922 թ.<sup>38</sup>, 1925 թ. ապրիլին նա հանքապետության ժողոտագերիորշում հանդես եկավ «Հայաստանի հանքային աղբյուրները» գեկուցումով, որը խթան հանդիսացավ այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ կազմակերպելուն։ Ընտրվում է հատուկ հանձնաժողով՝ Հ. Կարապետյանի, բժիշկ և. Հովհաննիսյանի, քիմիկոս Գ. Մեղմիկյանի, ինժեներ Ա. Տեր-Մելլյանի և Մ. Ավագյանի անդամակցությամբ, որոնց հանձնարարվում է ուսումնասիրել գործնական նշանակություն ունեցող մի քանի կարևոր հանքային աղբյուրներ։ Հանձնաժողովին ներկայացրած նյութերի ջրահրկաբանական մասը գրում է Հովհ. Կարապետյանը։

1929 թ. Հովհ. Կարապետյանը բնտրվում է Հայաստանի առողջապահության ժողովրդական կոմիսարիատի գիտաբժիշկական խորհրդի անդամ, խորհուրդ, որը նրա ակտիվ մասնակցությամբ զգալի աշխատանք է ծավալում առողջարանների շինարարության զարգացման բնագավառում։ Հետագա տարիներին նա հանքապետության անվանի մարդկանցից մի քանիսի՝ ջրահրկաբան Ա. Դեմյոնինի, բժիշկներ Ա. Մաղաթյանի և լ. Հովհաննիսյանի հետ մեծ գործ է կատարում հանքային աղբյուրների հետազոտման, Արգնի առողջարանի բարեկարգման և ընդհանրապես առողջարանների շինության բնագավառում։

Այդ հարցերին է նվիրված ականավոր երկրաբանի աշխատություններից մեկը<sup>39</sup>, որը ամփոփում է Հայաստանի

<sup>38</sup> Տ. Հ. Գидро-геологическое описание Озанларских минеральных источников. «Экономическая жизнь Кавказа», 1922, № 2—3.

<sup>39</sup> Главные минеральные источники Армянской ССР в связи с развитием курортного строительства. Материалы по геологии и гидрологии Армянской ССР, вып. 3, 1938.

դլիսավոր հանքային աղբյուրների (Արզնի, Դիլիջան, Ջերմուկ) կատարած ուսումնասիրությունների արդյունքները: Դրանք գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ ու եղրակացություններ են, որոնք արվում են ինչպես առանձին հանքային աղբյուրների, այնպես էլ կուրորտաշինության հետագա զարգացման ուղղությամբ: Հիշատակման արժանի են հանքային ջրերի գիտական ուսումնասիրությունների կազմակերպման, ջրհավաքի և պաշարների ավելացման, կլիմայական, երկրաբանական, և ջրա-երկրաբանական պայմանների ուսումնասիրման, լարորատորիաների ստեղծման, ջրերի պարբերաբար անալիզների կատարման և ապակու գործառնի կառուցման հարցերը:

Հանքային ջրերի հարցը միշտ էլ մոտիկ է եղել Հովհաննեսի սրտին: Նա իր գործունեության դեռ վաղ շրջանում հետաքրքրվել է մի շարք հանքային աղբյուրների հարցերով և բարձրացրել այդ ջրերի գերն ու նշանակությունը երկրի տնտեսության և մարդու կյանքի համար: Այդ են հաստատում նրա հրապարակած առանձին հոդվածները, որոնք նվիրված են Բորժոմիի<sup>40</sup>, Խվեդուրեթիի<sup>41</sup>, Ասպինձայի<sup>42</sup>, Ֆիխս-Զվարիի<sup>43</sup> և ուրիշ հանքային աղբյուրներին: Բացի հանքային ջրերից, նա զբաղվել է նաև գետնաջրերի և քաղցրահամամական ջրամատակարարման համար, որով ավանդերի ջրամատակարարման հարցերով, Գեռ 1915 թ. հետազոտում է Մոխվեուի ամառանոցի այսպես կոչվող՝ «Ցիվի-ծղալի» աղբյուրները Քութայիսի քաղաքը խմելու ջրով ապահովելու նպատակով: Այդ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են նրա տարիներ հետո հրատարակած «Ջրա-երկրաբանական ակնարկներ» հոդվածում<sup>44</sup>, որը տարիս է վերը հիշատակած աղբյուրների մանրամասն նկարա-

<sup>40</sup> «Кавказ», 1901, № 263.

<sup>41</sup> «Вестник горного дела и орошения на Кавказе», 1901, № 20.

<sup>42</sup> Նոյնը, 1901, № 22:

<sup>43</sup> «Тифлисский листок», 1909, № 200.

<sup>44</sup> «Экономическая жизнь Кавказа», 1922, № 2—3.

զրությունը և ինչպես նրանց ջրա-երկրաբանական, այնպես  
էլ Մոխվեռուլի-Քութայիսի ջրատարի երկրաբանական պայ-  
մանները:

1923 թ. Հովհ. Կարապետյանը ուսումնասիրում է Արա-  
գած լեռան և Արարատյան դաշտավայրի երկրաբանական կա-  
ռուցվածքը՝ կապված ջրաբերության և ջրամատակարարման  
հարցերի հետ: Հիմնավորում է Արագածի ջրերի հսկայական  
պաշարների կարևոր նշանակությունը ժողովրդական տնտե-  
սության համար, մշակում վերերկրյա ու ստորերկոյա ջրերի  
հետագա օգտագործման մի քանի գործնական միոցանում-  
ներ: Դրանցից հատկապես արժանի են հիշատակման ար-  
տեղյան ջրհորների փորման (Արարատյան դաշտավայրի  
բնակչությունը խմելու ջրով ապահովելու և հողերը ոռոգելու  
համար) և ձահիճների չորացման ու նոր հողատարածու-  
թյունների յուրացման հարցերը: Ուշագրավ է, որ այդ աշխա-  
տանքներին մեծ հետաքրքրություն և անմիջական մասնակ-  
ցություն է հանդես բերում սովետական պետության և կոմու-  
նիստական կուսակցության ականավոր գործիշ կուկաշինը,  
որը նրա հետ օրերով շրջագայում էր Արագածի լանջերին և  
թալինի ու Սարգարաբագի (Հոկտեմբերյան) դոկտում:

1925 թ. Հովհ. Կարապետյանը ուսումնասիրում է էջ-  
միածնի, Ղամարլուի (Արտաշատ) և Վեդու (Արարատ) շրբ-  
ցանների ջրա-երկրաբանական պայմանները և շարունակում  
ուսումնասիրել արտեզյան ջրհորների փորման և ձահճակա-  
լած հողատարածությունների չորացման, նոր հողակտորների  
յուրացման հարցերը: Շատ անգամ և տարբեր առիթներով  
զբաղվել է նաև Կըրի-բուլաղի (Կաթնաղբյուր) և Արգնու  
քաղցրահամ նշանավոր աղբյուրների հարցերով: Նա բազ-  
միցս հրավիրվել է Երևանի նոր ջրատարի և ջրմուղու շինա-  
րարության, աղբյուրների ջրհավաքի և ջրերի պաշարների  
ավելացման խիստ կենսական հարցերի լուծման նպատակով:

45 Возможности увеличения дебита Крхбулахских источников  
Котайкского района Армянской ССР. «Научные труды Ереванского  
государственного университета», т. XVII, 1941.

ների ջրերի պաշարների ավելացման համար առաջարկում է կատարել մանրամասն հետազոտություններ, տեղագրական և ջրա-երկրաբանական հանույթ, աղբյուրների ակունքների մաքրում և ավելի նպատակա՞րմար ջրհավաք, զբաղվել է նաև Արթիկի (1929), Լենինականի (1930), Արարատի (1935), Երևանի ՍԿ գործարանի (1937) և Հանրապետության մի շարք շրջկենտրոնների ու առանձին բնակավայրերի ջրամատակարարման հարցերով:

**Ն**որ թափով ու ոգևորությամբ է շարունակում Կարապետյանը իր բեղմնավոր գործունեությունը նաև ինժեներական ու կիրառական երկրաբանության, շինարարության և հատկապես քաղաքաշինության ասպարեզներում։ Ամենից առաջնա ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքաշինության նախագծմանը, ինչպես նաև Հայաստանի քաղաքների և Թիֆլիսի բարեկարգման հարցերում։ Այստեղ հատկապես արժանի է հիշատակել Կարապետյանի անմիջական աշակեցությունը Երևանի գլխավոր նախագծի ստեղծման գործում ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանին, երկրաբանական պայմանների հետազոտման, շինանյութերի ուսումնասիրության և ընտրության, անտիսեյսմիկ շինարարության հարցերի մշակման ընթացքում։ Երևանի համարյա բոլոր խոշոր կառուցումների երկրաբանական պայմանների հետազոտությունները հանձնարարվում են նրան, զրում է Կառավարական տան (1933, 1935), ՍԿ գործարանի (1933), Ալրադացի (1935), Գրքի պալատի (1936), Հաղթանակի կամուրջի (1941) և Լենինյան շրջանի բոլոր խոշոր գործարանների ու կառուցումների երկրաբանական պայմանների եղբակացությունները։

**Հոգէ.** Կարապետյանը մասնակցում է նաև Հայաստանի ծավալուն շինարարության և շինանյութերի ուսումնասիրության գործին, հրապարակում մի շարք հողվածներ, որոնք նվիրված են Երևանի շինարարության երկրաբանական պայմանների հետակացությունները։

մաններին ու գրունտի հատկություններին, Հայաստանի այնքան բազմազան ու հարուստ շինանյութերի (սուֆ, բազալտ, գրանիտ, մարմար, պիմզա և այլն) գործնական նշանակությանը և հեռանկարներին:

1930 թ. Հովհ. Կարապետյանը նշանակվում է Հայաստանի ժողկոմիսորչի և Անդրկովկասյան պետական երկրաբանական-հետախուզական վարչության (Զակ ԳԳԲՈՒ) մշտական խորհրդատու, իսկ ավելի ուշ՝ 1932—1934 թթ. նաև «Քիմկոմբինատ», «Դաշքեսաւստրոյ» և «Ջայզրուզիա» խոշոր կազմակերպությունների ու Անդրկովկասյան երկաթուղային վարչության խորհրդատու: Այդ պաշտոններում նա դրսերում է իրեն ոչ միայն որպես խոշոր մասնագետի, այլև մեծ կազմակերպչի, որը հսկայական գործ է կատարում անզըրկովկասյան մասշտաբով հանքավայրերի հետախուզման ու շահագործման, ջրա-երկրաբանական հետազոտությունների և ամենատարբեր շինարարական աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման հարցերում:

**Խ**ոշոր կառուցումների բովում կոփված և արգեն մեծ անուն վաստակած ինժեներ-երկրաբան Կարապետյանը 1931 թ. հրավիրվում է Մոսկվա և նշանակվում Մոսկվա-Վոլգա ջրանցքի շինարարության գլխավոր խորհրդատու և նրա նախագծի հեղինակի տեղակալ:

Բնությունը վերափոխող այդ հսկա նախագիծը, որը հեղինակը անվանակոչել էր «Արէան», իրենից ներկայացնում էր ինքնատիպ, մի խոշորագույն կառույց, որը վոլգայի ջրավաքի միջոցով լուծելու էր մի շարք կենսական հարցեր: Այս բարդ և մեծ մասշտաբի պլանի առանձին հարցերի լուծման և իրականացման գործում Հովհ. Կարապետյանը ևս կատարում է անգնահատելի աշխատանք, ղեկավարելով նախագծի ինժեներական երկրաբանության, ջրամատակարարման և հիդրոտեխնիկական կառուցումների ամենապատասխանատու բնագավառները:

КОМИССИЯ РАЙОНИРОВАНИЯ  
ПРИ ГОСУДАРСТВЕННОЙ ПЛАНОВОЙ КОМИССИИ С.С.Р. АРМЕНИИ

МАТЕРИАЛЫ ПО РАЙОНИРОВАНИЮ  
Вып. I.

Инженер-Геолог О. КАРАПЕТИАН

ГЕОЛОГИЧЕСКИЙ ОЧЕРК  
С.С.Р. АРМЕНИИ

(С прилож. карты полезных ископаемых и минеральных вод.)

ЭРИВАНЬ 1928 г.

Հովհ. Կարապետյանի «Հայկական Եօւ Հրկրաբանական  
ակնարկ» գրքի շապիկը

Սկզբնական շրջանում նա մանրամասն ծանոթանում է Մոսկվա—Վոլգա ջրանցքի և Մոսկվայի ջրամատակարարման նախագծերի ու պլանների հետ, իսկ այնուհետև կատարում մի շարք դաշտային հետախուզական աշխատանքներ իստրա դետի ավագանում և Մտարիցա քաղաքի ու Զելենկովո, Չուկովինո, Զերենկովո ավանների տեղամասերում, տալիս է մի քանի ամբարտակների ջրա-երկրաբանական պայմանների բնութագիրը, կազմում է Վոլգայի ջրահավաքի նախահաշիվը:



Հովհ. Կարապետյանը (աջից) Մոսկվա—Վոլգա ջրանցքի նախագծի մի խումբ աշխատողների հետ. Մոսկվա, 1932 թ.

1931 թ. նոյեմբերին Մոսկվայի պլանային ակադեմիայում Հովհ. Կարապետյանը կարդում է «Էներգետիկայի հետ կապված հիգրոսեխնիկական կառուցումների երկրաբանական պայմանների ուսումնասիրությունը» թեմային նվիրված դասախոսությունները, որոնք անցնում են մեծ հաջողությամբ: Լենինգրադում կայացած Համամիութենական առաջին ջրա-երկրաբանական համագումարում նա հանդես է գա-

լիւ «Սևանա լճի ֆիլտրացիայի պրոբլեմը» զեկուցումով, որը զգալի հետաքրքրություն և մտքերի աշխույժ փոխանակություն է առաջացնում: Նրա գրչին են պատկանում «Երաշտի պրոբլեմը՝ կապված Վոլգայի ջրահավաքի նախագծի հետ» և «Վոլգա, Դոն և ուրիշ գետերի ջրահավաքը ըստ ինժեներ Ավդուկի «Արէան» նախագծի և նրա նշանակությունը Անդրկովկասի համար» հոդվածները, որոնց մեջ, զիտա-հանրամատչելի ձևով շարադրենով այդ պրոբլեմի գերն ու նշանակությունը, խոսում է այն մեծ վերափոխումների մասին, որոնք բացառիկ դեր կիսազան Մերձվոլգայի, Հյուսիսային Կովկասի և այլ մարզերի ու շրջանների, ինչպես նաև Անդրկովկասի ժողովրդական տնտեսության մեջ,

Հյանատանի կառավարության հրավերով, 1934 թ. Հոկտեմբերին Հովհաննես Կարապետյանը թիֆլիսից փոխադրվում է Երևան կիրառական երկրաբանության և հանքարանության գիտա-հետազոտական ինստիտուտ կազմակերպելու նպատակով: Այդ ինստիտուտի ստեղծելու գործը զգալի դժվարություն էր ներկայացնում: Ամենից առաջ հարկավոր էր ունենալ շենք, լաբորատոր բաղադրամ, սպրեավորում, տեխնիկական գրադարան և համապատասխան կադրեր: Ահա այն հիմնական խնդիրները, որոնցով պետք է զբաղվեր Հովհ. Կարապետյանը և ինքնստինքյան հասկանալի է, թե ինչպիսի դժվարություններ պետք է հաղթահարեր այդ հարցերի լուծման հանապարհին: Սակայն Կարապետյանը այն հաղվագնդի եռանդի տեր մարդն էր, որը շեր վախենում դժվարությունից, ուներ կազմակերպական աշխատանքի մեծ ձիրք և մեծ ոգևորությամբ անցնում է գործի:

Նորաստեղծ ինստիտուտին տրվում է շենք, առանձնացվում են գրամական զգալի միջոցներ և համապատասխան հաստիքներ: Եվ Կարապետյանը, հատկապես Հայաստանի ժողովրդի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի անմիջական

օգնությամբ, մեծ դործ է կատարում ինստիտուտի գիտա-  
տեխնիկական բազայի ստեղծման և Հետագա ընդարձակման  
ուղղությամբ։

Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման բնա-  
գավառում գիտահետազոտական աշխատանքներն ուժեղաց-  
նելու նպատակով, 1935 թ. փետրվարին Հայկական ՍՍՀ  
Ժողկոմսովետի որոշմամբ<sup>46</sup> Հիմնվում է Միության գիտու-  
թյունների ակադեմիայի Հայկական ֆիլիալ (ԱրմՖԱՆ), որի  
կազմի մեջ մտցվում է նաև Երկրաբանական ինստիտուտը:  
Նույն որոշումով Հովհ. Կարապետյանը նշանակվում է ինս-  
տիտուտի ղիրեկուր, Հաստատվում ֆիլիալի նախագահու-  
թյան անդամ և արշավախմբերի գիտա-Հետազոտական հանձ-  
նաժողովների նախագահ։

Հայկական ֆիլիալի ստեղծումը Երկրաբանական ինստի-  
տուտի համար հանդիսացավ տեսական ու գործնական աշ-  
խատանքների կազմակերպման և ծավալման մի նոր շրջան։  
Կարապետյանը պարբերական մամուլում հանդես է դալիս  
մի քանի հոդվածներով<sup>47</sup>, որոնցում պարզաբանում է նորա-  
ստեղծ ինստիտուտի նպատակներն ու խնդիրները, Հայաս-  
տանի Երկրաբանական կառուցվածքի և ընդերքում տարած-  
ված օգտակար հանածոների բազմակողմանի ուսումնասի-  
րության գործում։

Ինստիտուտի հիմնադրման առաջին տարիներին նա  
դպալի աշխատանք է կատարում ինստիտուտի ղիտա-արտա-  
դրական բազայի (քիմիական լաբորատորիա, տեխնիկական  
գրադարան, շղիֆների պատրաստման արհեստանոց և այլն)  
ստեղծման, մասնագիտական կադրերի հավաքագրման ու  
պատրաստման և գիտա-Հետազոտական մի քանի թեմատիկ  
աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, երկրաբա-  
նական ինստիտուտի անդրանիկ դիտնականների և Հայաս-

46 Տե՛ս, «Խորհրդային Հայաստան», 1935, № 31:

47 Տե՛ս նույն տեղում, № 137: «Կոմմունիստ», 1935, № 148.

տանի երկրաբանական ծառայության գործիչների հետ մշակում ու պլանավորում է հանրապետության երկրաբանական հանույթի և երկրաբանական քարտեզի կազմման հետ կապված հարցերը, կազմակերպում մի շարք հանքավայրերի և առանձին ոչմետաղային ու մետաղային օգտակար հանածոների որոնման ու հետախուզման աշխատանքները, տալիս դրանց գնահատման և շահավետ օգտագործման հիմունքները, նախապատրաստում ու հրատարակում է մի շարք հողվածներ նվիրված ջրա-երկրաբանությանը և կիրառական երկրաբանությանը և այնուհետև ստեղծում է երկրաբանական թանգարան:

Հայաստանի Կենտգործկոմը նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, իսկ 1936 թ. Հունիսին՝ Միության գիտությունների ակադեմիայի նախագահությունը նրան Անդրկովկասի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում կատարած աշխատանքունիքը համար, առանց դիսերտացիա պաշտպանելու շնորհում է երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտորի աստիճան:

1936 թ. լուս է տեսնում Հովհ. Կարապետյանի աշխատությունը նվիրված Փամբակի հովտի գենուղացիոն պրոցեսներին<sup>48</sup>: Պետք է հիշատակել, որ այն ինստիտուտի հրատարակած անդրանիկ գրքույկն էր: Հեղինակը քննարկում է Հայաստանի երկրաբանության և ջրա-երկրաբանության հետ կապված ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող մի կարևոր հարց և անում գործնական նշանակություն ունեցող առաջարկություններ: Աշխատության մեջ քննարկվում են Փամբակի հովտի տեղանքի, կլիմայի, ջրագրության, երկրաբանության և երկրաբանական պայմանների հարցերը, որոնք առնշվում են անտառների և բուսածածկոցի պահպանման խնդիրներին: Գրքին կցված է Փամբակի հովտի քարտեզը:

<sup>48</sup> Денудационные процессы в Памбакской долине в ССР Армении. (С приложением карты). Материалы для геологии и гидрогеологии ССР Армении, вып. 1, М., 1936.

Մինչև 1939 թ. նա գլխավորում է երկրաբանական ինստիտուտը և միայն Ֆիվանդության պատճառով հեռացավ այդ պաշտոնից, մնալով ինստիտուտի գիտական խորհրդի անդամ և խորհրդատու, շարունակեց օգնել ինստիտուտին նրա առջև դրված գիտա-հետազոտական խնդիրների լուծման և որակյալ լուրերի պատրաստման գործում:

1943 թ. նոյեմբերին ստեղծվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան, որի կազմի մեջ մտնող մի քանի ինստիտուտների շարքում իր պատվավոր տեղն է գրավում նաև Հովհաննես Կողմից հիմնադրված ու այնքան սիրված երկրաբանական ինստիտուտը: Դրանով սկսվում է Հայաստանի երկրաբանության գիտական ուսումնասիրության մի նոր, ավելի արգասավոր շրջանը:

Ուրախալի է նշել, որ իր գոյության շորս տասնամյակի ընթացքում, ինստիտուտը մի փոքր գիտական օջախից աճել ու վերածվել է գիտա-հետազոտական մի խոշոր կենտրոնի, որն ունի բազմաթիվ լաբորատորիաներ ու կաբինետներ, Հենց նրա՝ Հովհաննես Վանգարան, Հարուստ տեխնիկական գրադարան և ականավոր գիտնական-երկրաբանների ղեկավարությամբ աշխատող շնորհալի կոլեկտիվ, որն աշխատում է այնպիսի գիտական ու գործնական նշանակություն ունեցող պրոբլեմների մշակման վրա, որոնց արդյունքները լայն ճանաչում են ստացել ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Երկրաբանության աննախընթաց զարգացումը Հայաստանում, արդեն 1930-ական թթ. անհետաձգելի պահանջ է առաջադրում ազգային մասնագիտական կադրերի պատրաստման գործը տեղում կազմակերպելու ուղղությամբ: Եվ ահա, 1934 թ. սեպտեմբերին, անվանի երկրաբան պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի, Հովհաննես Կողմից համարանի ուղարկությամբ Տիգրան Մուշեղյանի նախաձեռնությամբ համալսարանում ստեղծվում է երկրաբանական բաժին: Դրանով իրականանում է Կարապետյանի վաղեմի

ցանկություններից ևս մեկը՝ աղջային բարձրագույն ուսումնական հաստատությունում ունենալ երկրաբանական կադրերի պատրաստման օջախ:

Երևանի պետական համալսարանի նորաստեղծ աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետում Հովհ. Կարապետյանը զգալի աշխատանք է տանում այն բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու, ուսանողների ուսումնարտադրական հարցերը կազմակերպելու և ղեկավարելու համար: Նա 1935 թ. մինչև 1939 թ. վարում է ֆակուլտետի ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչի պաշտոնը, կազմում և վերացնելում է մի շարք մասնագիտական առարկաների ուսումնական ու արտադրական ծրագրերը, կազմակերպում է Հայաստանի Կովկասի երկրաբանությանը ու ֆիդիկական աշխարհագրությանը նվիրված դասախոսություններ:

1938—1941 թթ. Հովհ. Կարապետյանը նշանակվում է համալսարանի երկրաբանական ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահ: Այս պաշտոնում նույնպես նա մեծ համարությամբ ղեկավարում է ֆակուլտետի առաջին տարիների շրջանավարտների ավարտական քննությունները:

Այդ տարիներին նա մեծ ուշադրություն է դարձնում ֆակուլտետը շնորհալի երիտասարդ մասնագիտական կադրերով ապահովելու, ինչպես նաև նրանց հետագա մասնագիտացման հարցերի վրա: Նրա անմիջական օգնությամբ երկրաբանական ֆակուլտետի ղեկան Հովհաննես Ստեփանյանը, առաջինը հանրապետության մեջ, պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա:

Կարապետյանը շնորհակալ աշխատանք է կատարում համալսարանում նաև մայրենի լեզվով մասնագիտական գրականության և երկրաբանական տերմիններ ստեղծելու ուղղությամբ: Կազմակերպում է մի քանի ձեռնարկների թարգմանության ու հատարակության գործը, խմբագրում պրոֆ. Ա. Կրուբերի «Ընդհանուր երկրագիտություն» ձեռնարկը

(1940) և ակադեմիկոս Ա. Բորիսյակի «Պատմական երկրաբառնության դասընթացը» (1941):

1937 թ. Երևանում և նրա շրջակա մի քանի գյուղերում հաճախակի կրկնվող երկրաշարժի օրերին Հովհաննես աշխարհագրական ընկերության հետ բնակչության մեջ կազմակերպում է բացատրական աշխատանք: Նա հանդես գալիս բազմաթիվ զեկուցումներով: Հովհաննես աշխարհագրական ընկերության հիմնադիրներից և նրա ակտիվ անդամներից մեկն է եղել: Երկրաշարժերի ուսումնասիրության նյութերի մշակումը հետագայում հնարավորություն տվեցին ականավոր երկրաբանների այդ ուղղությամբ կատարած իր ուսումնասիրությունների արդյունքը:

1937 թ. Հունիսին Մոսկվայում հրավիրվում է Միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսը, որին մասնակցելու համար Մոսկվա է մեկնում Հայաստանի երկրաբանական ծառայության ավագագույն ներկայացուցիչ, առաջին պատվիրակ Հովհաննես Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին աշխարհի ականավոր երկրաբան-դիտնականներ, որոնցից շատ-շատերը հանդես եկան խիստ արժեքավոր զեկուցումներով: Կոնգրեսը ցույց տվեց սովետական երկրաբանական դիտության և երկրաբանական ծառայության աննախընթաց վերելքը և ձեռք բերած լուրջ հաջողությունները:

Կոնգրեսում Հովհաննես Կարապետյանը հանդես է գալիս «1937 թ. Հունվարի 7-ի Երևան քաղաքի և նրա շրջակայքի երկրաշարժի բնույթի և պատճառների մասին» թեմային նվիրված զեկուցումով<sup>49</sup>, որը լսվում է մեծ հետաքրքրությամբ:

**Մոտ երեք տասնամյակի ընթացքում Կարապետյանի հավաքած շատ արժեքավոր ու խիստ բազմազան երկրաբա-**

<sup>49</sup> Զեկուցման թեղիսները ապագրված են Կոնգրեսի աշխատություններում: Տե՛ս Հруց 17 сессии Международного геологического конгресса, т. 5, М., 1937.

Նական հարուստ հավաքածուների բազայի վրա, նրա անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ 1937 թ. երեսանում հիմնադրվում է գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի երկրաբանական ինստիտուտի թանգարանը:

Վերջապես իրականանում է ականավոր երկրաբանի երկար տարիների իղձ՝ մի հարկի տակ կենտրոնացնել ու ցուցադրել իր հավաքած «քարերը», այն քարերը, որոնք նա հավաքել էր մեծ դժվարությունների ու զրկանքների գնով, այն քարերը, որոնց նա նվիրաբերել էր իր ողջ կյանքը, որոնց նա տվել էր իր ամբողջ ուժը: Եվ կարծես իր նոր երիտասարդությունն ու երջանիկ կյանքի գարունն ապրող «ծերունին» երգեց «քարերի զարթոնքը» և «կյանքի կոչեց» նրանց, որովհետև «Սովետական իշխանության օրով միայն սկսեցին «խոսել» մեր քարերը: Կուսակցության և կառավարության եռանդուն ջանքերով, աշխատավորների հզոր կամքով, դարերով ևրկրի ընդերքում թաղված քարատեսակները դուրս քաշվեցին ընդերքից և ի սպաս դրվեցին սոցիալիստական ընդարձակ շինարարությանը»<sup>50</sup>:

Հովհաննես Կարապետյանը նոր թափով լծվում է աշխատանքի: Նա օր ու գիշեր, համարյա առանց հանգստի ղեկավարում է թանգարանի ստեղծման հետ կապված բոլոր հարցերը:

Եվ ամիսներ անց, հունիսի վերջերին, Աբովյանի և Կոունյանցի (այժմ Պուշկինի) փողոցների անկյունում, երկրաբանական ինստիտուտի նախկին շենքի վերնահարկում, թանգարանը արդեն պատրաստ էր<sup>51</sup>:

Երկրաբանական թանգարանի առաջին այցելուները հենց 17-րդ կոնգրեսի թվով հիսուն պատգամավորներն էին, որոնք մասնակցում էին Կովկասյան էքսկուրսիաներին: Պատգամա-

50 Հովհ. Կարապետյան, Հայաստանի քարերը, «Խորհրդային Հայաստան», 1935, № 285:


51 Թանգարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1937 թ. նոյեմբերի 30-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 17-րդ ամրելարձի առթիվ:

վորների արշավախոսմբը Կովկասում զլխավորում էին կենտրոնական գիտա-հետազոտական երկրաբանական-հետախուզական ինստիտուտի (ՅնիԳԻԲ) ավագ երկրաբաններ Ա. Պ. Գերասիմովը և Կ. Ն. Պաֆֆենհոլցը, բացատրությունները տվել է Հովհ. Կարապետյանը: Թանգարանի առաջին այցելուների մեջ էին համաշխարհային առուն վաստակած ականավոր երկրաբան-գիտնականներ Սմիթը (Վաշինգտոնի երկրաբանական ծառայության զլխավոր երկրաբան), Բելլին (Անգլիայի կայսերական երկրաբանական ծառայության դիրեկտոր), Բերտրանը, Շանյուն և Լյուտոնը (Սորբոնի համալսարանի պրոֆեսորներ), Պողպերան (Զեխուլովակիայի համալսարանի ուսեկտոր), Ֆուրմարիենը (Բելգիական երկրաբանական ընկերության նախագահ՝) և ուրիշներ, որոնք ցուցադրված հարուստ նյութերի գիտումից հետո խոստովանում են, որ թանգարանը իրենց վրա թողնում է բացառիկ տպավորություն, որ այն տալիս է լրիվ պատկերացում՝ երկրաբանական տեսակետից զգալի հետաքրքրություն ներկայացնող Հայաստանի օգտակար հանածոների և նրա երկրաբանական կառուցվածքի մասին<sup>52</sup>:

Իր գոյության 40 տարիների ընթացքում երկրաբանական թանգարանը աճել և դարձել է մի ինքնատիպ «քարերի գանձարան», որը գիտա-հանրամատչելի ձևով ցուցադրում է այն խոշոր հաջողությունները, որոնք ձեռք են բերել մեր երկրաբանները հանրապետության երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների ուսումնասիրման և հետախուզման պատվավոր գործում: Թանգարանը այսօր ևս լրացվում է երկրաբանական ինստիտուտի և հանրապետության երկրաբանական ծառայության աշխատողների նոր, արժեքավոր հավաքածուներով և ներկայումս այն իրավամբ դասվում է Միության լավագույն երկրաբանական թանգարանների շարքը:

Անցած տարիների ընթացքում երկրաբանական թանգարանը կատարել է զգալի աշխատանք իր առաջ դրված խընդիրների կհնագործման ուղղությամբ: Թանգարանի ֆոնդը

52 Տե՛ս «Կոմմոնիստ», 1937, № 158.



Պիոնի. Հովհաննես Կամապետյանի անվան հրկրաբանական թանգարանի սրահը

լրացվել է նոր նյութերով, ընդարձակվել են գոյություն ունեցող բաժինները և ստեղծվել նորերը:

Հայաստանի ժողովածխորհրդ բավարարեց Հայաստանի զիտությունների ակադեմիայի նախագահության զիմումը և Հովհաննես Կարապետյանի մահից հետո, նրա հիշատակը հավերժացնելու նպատակով, 1944 թ. օգոստասի 26-ի որոշմամբ նրա անունը շնորհեց ականավոր երկրաբանի կողմից հիմնադրամ թանգարանին<sup>53</sup>:

**Կ**յանքի վերջին տարիներին, վաստակաշատ երկրաբանը, չնայած առողջական ծանր վիճակին, շարունակում է մասնակցել երկրի հասարակական, տնտեսական ու քաղաքական գործերին: Նա իր հարուստ փորձն ու զիտելիքները շարունակում էր հաղորդել հանրապետության երկրաբանական ծառայության և շինարարական կազմակերպությունների աշխատողներին, տալիս է արժեքավոր խորհուրդներ երկրաբանության առաջ ծառացած խնդիրների լուծման և կազրերի պատրաստման հարցերում: Անվանի երկրաբանը հատկապես մեծ օգնություն և բացառիկ հոգատարություն է ցուցաբերում զիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի երկրաբանական ինստիտուտի և երևանի պետական համալսարանի մի խումբ շնորհալի երկրաբանների նկատմամբ, որոնցից շատերը ներկայում են անաշխատ մասնագետներ են:

1941 թվական: Սկսում է Հայրենական պատերազմը: Ականավոր երկրաբանը մեծ հայրենասերին վայել կրթությամբ իր բոլորի և զայրութիւն ձայնը միացնում է միլիոնների ձայնին: Նա ականավոր զիտնականներ Հ. Աճառյանի և Ա. Տերտերյանի հետ հանդիս է գալիս «Հաղթանակը մերը կլինի» հոդվածով<sup>54</sup>, որի մեջ հնչում են նրանց բոցաշունչ հայրենասիրական խոսքերը.

53 Տե՛ս «Սովորական Հայաստան», 1944, № 174:

54 Տե՛ս «Կոմմունիստ», 1941, № 151.

«Գերմանիան հարձակվել է Սովետական Միության վրա։ Այդ ո՞ր Գերմանիան է կատարել այդ հանդուգն արարքը։ Գյոթեի, Շիլերի, Հայնեի և մյուս հոչակավոր բանաստեղծների Գերմանիա՞ն։ Մոցարտի, Բախի, Բեթհովենի և մյուս մեծ կոմպոզիտորների Գերման՝ ա՞ն։ Ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Սովետական Միության դեմ հանդես է եկել ֆաշիստական Գերմանիան, ժողովուրդների արյան ծարավի, ժողովուրդների և ցեղերի ստրկացնող Գերմանիան։

Գիտակցելով հանգամանքի ամբողջ լրջությունը և վեհությունը, մենք, չնայած մեր ալեոր հասակին, պատրաստ ենք մեր կառավարության հենց առաջին կոչին նետվել ռազմադաշտ, նվիրել մեր ամբողջ ուժերն ու գիտելիքները մեր անձայրածիր, չքնաղ ու սիրելի Հայունիքին։»

Կյանքի վերջին տարիներին բազմավաստակ երկրաբանը զրում է տեղական հումքի օգտագործման հարցերին նվիրված մի շարք հոդվածներ և ամփոփում է նախկինում կատարած հետազոտությունների արդյունքները, որոնցից մի քանիսը տպագրվում են գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագրում»<sup>55</sup> և Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններում»<sup>56</sup>։

Ականավոր երկրաբանը իր կյանքի վերջին օրերն ապրեց այն ժամանակ, երբ մեր փառապանծ զորքերը Հայրենական պատերազմի բոլոր ճակատներում անցան հարձակման, երբ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի բազայի վրա հարազատ կառավարության և կուսակցության հոգատարության շնորհիվ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան։ Ահա երկու խոշոր իրադարձություններ, որոնք ցնծությամբ և ուրախությամբ լցրեցին բազմավաստականականի սիրտը։

Հովհաննես Կարապետյանը վախճանվեց Երևանում, 1943 թ. գեկտեմբերի 4-ին, երկարատև ու ծանր հիվանդու-

<sup>55</sup> Տե՛ս «Известия» Арм. ФАН, 1941, 1 (6) և 1942, 6 (20).

<sup>56</sup> Տե՛ս «Научные труды» Ер. ГОС. ун-та, 1941, т. 17.

թյունից հետո: «Հանձին Հ. Կարապետյանի, — ասված է մա-  
հախոսականում<sup>57</sup>, — մենք կորցրինք մի խոշորագույն մաս-  
նագետ կիրառական երկրաբանության բնագավառում, որը  
շատ ուժ ու եռանդ է ներդրել մեր երկրի արդյունաբերության  
վերականգնման և շինարարության զործի մեջ»:

Հովհաննես Կարապետյանի գրական ժառանգությունը  
բավականին մեծ է և բազմազան: Նա թողել է մոտ երկու  
հարյուր տպագիր աշխատություն ու հոդված և այդքան էլ  
ձեռագիր հաշվետվություն, եզրակացություն ու զեկուցագիր:  
Նրա աշխատությունների ցանկը նայելիս, մարդ զարմանում  
է, թե որքան շատ բնագավառներ է ընդգրկել նա: Բազմա-  
վաստակ երկրաբանը ստեղծագործել է ոչ միայն երկրաբա-  
նության, հանքաբանության, ջրա-երկրաբանության, կիրա-  
ռական երկրաբանության և լեռնա-հանքային արդյունաբերու-  
թյան բնագավառներում, այլև, շինարարության, պատմու-  
թյան, գրականության և արվեստի բնագավառներում:

Հովհ. Կարապետյանը անջնջելի հետք թողեց Հայաստա-  
նի և Անդրկովկասի երկրաբանության պատմության մեջ:  
Սերտորեն կապված լինելով իր հարազատ ժողովրդի հետ,  
նա անշեշ սիրով սիրեց և մինչև իր կյանքի վերջը հավատա-  
րիմ ծառայեց նրան: Ժողովուրդն էլ իր հերթին սիրեց ու մե-  
ծարեց նրան՝ Հայաստանի երկրաբանության առաջին սերմ-  
նացանին ու լեռնա-հանքային զործի մեծ նահապետին:

57 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1943, № 248:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԻՄՈԽՈՅԵՎԻԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ**

Հովհաննես Տիմոխոյի կարագետյանը ծնվել է 1875 թ. Հունիսի 2-ին,  
Ախալքալաք քաղաքում, արհեստավորի ընտանիքում:

1885—1890 թթ. Ախալքալաքի ծխական դպրոցի և Քաղաքալին ուսուական  
ուսումնարանի աշակերտ:

1890—1894 թթ. էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան:

1894—1895 թթ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սան:

1895—1896 թթ. Ախալքալաքի և Թիֆլիսի ծխական դպրոցների ուսուցիչ:

1897—1906 թթ. կատարել է երկրաբանական հետազոտական աշխատանք-  
ներ, ծավալել լուսավորչական և հրապարակախոսական գործունեու-  
թյուն:

1898—1906 թթ. «Կովկասյան Հայկական բարեգործական ընկերության» և  
«Հայկական դրամատիկական ընկերության» գործակար:

1901 թ. Թիֆլիսում լույս է տեսել «Կովկասում լեռնային գործի զարգացման  
համառոտ ակնարկ» գրքություն:

1901—1904 թթ. «Նովոյի օբողքնին» թերթի մամուլի տեսության բաժնի  
վարիչ:

1903—1907 թթ. «Նովոյի օբողքնին», «Տիֆլիսսկի լիստովի» և «Տիֆլիսսկա-  
յա գաղետա» թերթերում լույս է տեսել «Հայկական դրամա» Հող-  
գածաշարը:

1904 թ. Թիֆլիսում լույս է տեսել «Թիֆլիսափոր Կարա-Մուրզա» մենա-  
գրությունը:

1906 թ. մեկնել է Արևմտյան Թուրքիա և Հյուսիսային Աֆրիկա ճանապար-  
հանության:

1907—1912 թթ. Մոնահ (Բելգիա) Հանքաբանական բարձրագույն դպրոցի  
ուսանող:

1911—1913 թթ. կատարել է հետազոտական աշխատանքները բելգիական,  
ֆրանսիական, զերմանական և անգլիական ածխահանքերում:

- 1912 թ. «Ամենաբարձր գերազանցության դիպլոմով» ավարտել է Մոնսիր գործոցը և ստացել ինժեներ-երկրաբանի կոչում:
- Լույս են տեսել դիտական աշխատություններ նվիրված բելգիական ածխահանքերի հետախուզման ու ածխառասացացման հիմունքներին;
  - Ընտրվել է բելգիական երկրաբանական ընկերության իսկական անդամ:
- 1913 թ. Բելգիական վերադարձել է Հայրենիք և Հաստատվել թիֆլիսում:
- 1913—1915 թթ. Կովկասի մի շաբթ ընկերությունների և ձեռնարկատերերի հանձնարարությամբ կատարել է երկրաբանական հետախուզական աշխատանքներ:
- 1915 թ. Հետախուզել է Թուրքեստանի Զերելի շրջանի ածխի հանքավայրերը և հանձնել շահագործման:
- 1915—1916 թթ. զործուղվել է Իրան՝ Ռումիա և ավազանի և Կասպից ծովի հարավային շրջանների մի քանի հանքավայրերի հետախուզման նպատակով:
- 1917 թ. տվել է Շամբուղի պղնձի հանքավայրի մանրամասը նկարագրությունը և կազմել հանքավայրի երկրաբանական քարտեզը:
- Ընտրվել է Ալավերդու բանվորների պատգամավորների խորհրդի ղործադիր կոմիտեի անդամ:
- 1917—1920 թթ. գլխավորել է Ալավերդու խմբի հանքավայրերի հետախուզական աշխատանքները:
- 1921 թ. նշանակվել է Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչությանը կից գիտաժողովներական կոմիտեի լեռնա-գործարանային սեկցիայի վարիչ:
- Ընտրվել է Հայաստանի ժողովների խորհրդականության անդամ և Հայաստանի լեռնագործարանային ձեռնարկությունների ղլխավոր լիազոր:
- 1922 թ. նշանակվել է Հայաստանի գիտատեխնիկական խորհրդի անդամ, վրաստանի ժողովների խորհրդատու և Ռուսաստանի երկրաբանական կոմիտեի աշխատակից:
- Տվել է Զագէսի երկրաբանական պայմանների եղբակացությունը:
  - Հետախուզել է Նախիջևանի աղանձները, տվել է հանքավայրի ընդհանուր բնութագիրը և կազմել մի շաբթ պլաններ և նախագծեր աղանքը շահագործման հանձնելու համար:
- 1923 թ. մասնակցել է Անդրկովկասյան տնտեսական խորհրդակցության աշխատանքներին, որտեղ հանդես է եկել «Անդրկովկասի հանքային հարստությունները» գեկուցումով:
- Գլխավորել է Զաթալի երկաթի հանքավայրի և թուղի զործարանի վերականգնման աշխատանքները:
- 1923—1925 թթ. ուսումնասիրել է Վրաստանի ածխարդունաբերության վհակը և տվել հետազոտագործման հետանկարները:

- 1924 թ. նշանակվել է Արավերդու և Զանգեզուրի լեռնաշանքային ձեռնարկությունների և Աղբքեչանի ժողանտգերխորհի խորհրդատու:
- Անդրկենտգործկոմին առընթեր «Անդրկոմկասյան գիտական ասոցիացիայի» հանձնարարաւթյամբ հետազոտել է Հարավ-Օսիթիայի երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները:
- Մասնակցել է Վրաստանի ֆեռումարգանեցի արտագրության կազմակերպման և ուսումնասիրման աշխատանքներին:
- 1925 թ. կազմել է Աղբքեչանի լեռնա-հանքային արդյունաբերության վերականգնման ու կարգացման հնգամյա պլանը:
- 1925—1926 թթ. հետազոտել է Թարթար գետի ավազանի երկրաբանական պայմանները:
- 1927 թ. հետազոտել է Գալստանի մի քանի գետերի ավազանների երկրաբանական պայմանները:
- Հետազոտել է Թարթարավան գետի ավազանի ջրա-երկրաբանական պայմանները:
- 1927—1928 թթ. հետազոտել է Զորագէսի ջրա-երկրաբանական պայմանները:
- 1927—1930 թթ. ավել է Հայաստանի մի շաբթ Հիգրոտեխնիկական կառուցումների (Երգիս, Քանաքեռովհան, Ալզր լիճ և ջրանցքներ) ջրա-երկրաբանական պայմանների հերակացությունները:
- 1928 թ. Երևանում լույս է տեսել «Հայկական ՍՍՌ երկրաբանական ակադեմիա» գիրք:
- Մասնակցել է Տաշքենդում գումարված երկրաբանների համամիութենական երրորդ համագումարի աշխատանքներին, որտեղ հանդիս է եկել «Հայկական ՍՍՌ նորագույն Հրաբխային նյութերը և նրանց գործնական նշանակությունը» և «Երկաթի տոկոսային պարունակությունը ածխաշերտերի պառկած և կախված կողերում, որպես նրանց առաջացման բնույթի որոշիչ» զեկուցումներով:
- 1929 թ. Թիֆլիսում լույս է տեսել «Ախալքալաքի գավառի երկրաբանական նկարագրությունը» գիրք:
- Բնուրգել է Հայաստանի Առժողովում ատակամ գիտարքի անդամ:
- 1930 թ. նշանակվել է Հայաստանի Ժողկոմիսորհի և Անդրկոմկասյան սիհատական երկրաբանական-հետախուզական վարչության մշտական խորհրդատու:
- 1931 թ. մասնակցել է Համամիութենական առաջին ջրա-երկրաբանական համագումարի աշխատանքներին, որտեղ հանդիս է եկել Ըլեհանալ լճի ֆիլտրացիայի պրոբեմը գեկուցումով:
- Հանդիս է եկել Մոսկվայի պետական ակադեմիայում «Հներգեսիկայի հետ կապված Հիդրոտեխնիկական կառուցումների երկրաբանական պայմանների ուսումնասիրությունը» զեկուցումով:

- 1931—1932 թթ. աշխատել է Մոսկվա—Վոլգա ջրանցքի շինարարությունում որպես գլխավոր խորհրդատու և նախագծի հեղինակի տեղակալ:
- 1931—1934 թթ. տվել է Վրաստանի և Աղբքաշանի մի շաբթ հիդրոտեխնիկական կառուցումների ջրահրարանական պայմանների եղբակացությունները:
- 1932—1934 թթ. նշանակվել է «Քիմկոմքինատ», «Դաշըսանսարով», «Զայգրուզիա» կազմակերպությունների և Անդրկովկասյան երկաթուղիների վարչության խորհրդատու:
- 1934 թ. Թիֆլիսից փոխադրվել է Երևան և հիմնել Ժողկոմխորհին առընթեր — Կիրառական երկրաբանության և հանքաբանության գիտահետազոտական ինստիտուտ:
- Երևանում լույս է տեսել «Արագած լեռը» գիտահանրամատչելի գրքույզը:
- 1935 թ. նշանակվել է գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի երկրաբանական ինստիտուտի ղիրեստոր:
- Ընտրվել է Սամֆանի նախագահության անդամ ու արշավախմբերի գիտահետազոտական հանձնաժողովների նախագահ:
- Հայկ. ՍՍՀ Կենտգործկոմի կողմից նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործի և պրոֆեսորի կոչում:
- 1935—1939 թթ. հանդիսացել է Երևանի պետական համալսարանի ընդհանուր երկրաբանության ամբիոնի վարիչ:
- 1936 թ. Միության գիտությունների ակադեմիայի նախագահությունը շնորհել է երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտորի աստիճան:
- Մոսկվայում լույս է տեսել «Հայկական ՍՍՀ Փամբակի հովտի դենուգիոն պրոցեսները» գրքույզ:
- 1937 թ. հիմնադրել է գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի երկրաբանական ինստիտուտի թանգարանը:
- Մասնակցել է Միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսի աշխատանքներին, որտեղ հանդես է եկել «1937 թ. Հոնվարի 7-ի Երևան քաղաքի և նրա շրջակայիքի երկրաշրթի բնույթի և պատմաների մասին» գեկուցումով:
- 1938 թ. Մոսկվայում լույս է տեսել «Հայկական ՍՍՀ գիտավոր հանքային աղբյուրները կարգած բուժավայրերի շինարարության զարգացման հետո աշխատությունը»:
- 1938—1941 թթ. հանդիսացել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի պետական բննական հանձնաժողովի նախագահ:
- 1939—1943 թթ. հանդիսացել է գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի երկրաբանական ինստիտուտի խորհրդատու և գիտական խորհրդի անդամ:
- 1943 թ. գեկուցմբերի 4-ին Երևանում վախճանվում է Հովհաննես Կարապետյանը:

ՀԱՎՀ. ԿՈՐԱԳԵՏՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՐԴՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1901

Краткий очерк развития горного дела на Кавказе. Тифлис.

Минеральные богатства Кавказа и рудная лихорадка. «Вестник горного дела и орошения на Кавказе», № 11.

Уравель как курорт. «Кавказ», 4 сентября, № 233.

Окрестности Боржома как будущие курорты. «Кавказ», 7 октября, № 263.

Обзор выставки. «Новое обозрение», 12 октября, № 5845.

Горный отдел. «Тифлисский листок», 17 и 19 октября, №№ 242, 244.

Первый русский исследователь и инициатор горного дела на Кавказе граф А. А. Мусин-Пушкин. «Вестник горного дела и орошения на Кавказе», № 18.

Хведуретские минеральные воды. «Вестник горного дела и орошения на Кавказе», № 20.

Аспиндзинские минеральные воды. «Вестник горного дела и орошения на Кавказе», № 22.

1902

Будущность рами на Кавказе. «Кавказ», 8 января, № 6.

Археологические памятники Кавказа. «Новое обозрение», 17 января, № 5937.

Горное рекогносцировочно-разведочное бюро. «Вестник горного дела и орошения на Кавказе», № 3.

О землетрясении в Шемахе. «Кавказ» (приложение), № 1.

Материалы для геологии Кавказа. Библиография, «Новое обозрение», 29 марта, № 6005.

Этнографическое обозрение. Библиография. «Новое обозрение», 2 мая, № 6036.

По восточному черноморскому побережью. «Новое обозрение», 21 октября, № 6210.

Краткий учебник географии Кавказа с курсом родоповедения. Библиография. «Новое обозрение», 6 ноября, № 6226.

Ի՞նչ է պատմարը: «Մշակ», 11 մայիսի, № 100:

#### 1904

Գրիգորի Կարա-Մերգամարդիկով:

#### 1905

В археологическом обществе. «Новое обозрение», 30 ноября, № 246.

#### 1906

Письмо из Константинополя. «Черноморский голос», 23 августа, № 6.

Письмо из Александрии. «Черноморские новости», 22 сентября, № 15.

Անցուղի առամուսուրյաններ (Յամակ Եղիպատուից): «Մշակ», 20, 21 սեպտեմբերի, №№ 203, 204:

#### 1909

Цихис-Джварские минеральные источники. «Тифлисский листок», 4 сентября, № 200.

#### 1910

Մի բռուցիկ ակնարկ Բրյուսելի համայնքարհային ցուցանանդեսի մասին, «Մշակ», 17, 22 նույնի, №№ 155, 159:

#### 1912

Etude des sondages de Wandre et d'Harmigies. „Extrait des publications de l'Association des Ingénieurs de l'Ecole des Mines de Mons“.

les sondages et travaux de recherche dans la partie méridionale du bassin houiller du Hainaut. Bruxelles.

Recherche sur la proportion de fer existant dans le toit et dans  
le mur couches de houille. „Annales de la société géologique de  
Belgique“. Liege.

#### 1914

Радий, радиоактивные минералы и их происхождение. «Научные беседы врачей Закавказья», Тифлис.

Есть ли радий на Кавказе? «Тифлисский листок», 10 января,  
№ 7.

#### 1919

Об эксплуатации Олтийских каменноугольных месторождений.  
«Слово», 19 октября, № 53.

#### 1920

Соляные копи Армении. «Слово», 1 февраля, № 24.

Характер и причины Горийского землетрясения. «Слово», 25, 26  
февраля, №№ 44, 45.

Значение Олтийского района для республики Армении. «Слово»,  
4 июля, № 149.

Արելելան Հայաստանի հանքային բարությունները, «Միօցյա քեց»,  
2 օգոստոսի:

#### 1921

Будущность горных богатств Кавказских Советских Республик  
в связи с электрификацией Кавказа. «Экономическая жизнь Кав-  
каза», № 3.

#### 1922

Гидрогеологические очерки. «Экономическая жизнь Кавказа»,  
№ 2—3.

Минеральные богатства Армении и прилегающих к ней районов.  
«Экономическая жизнь Кавказа», № 4.

Геологические очерки. Там же.

Минеральные богатства Азербайджана. «Экономическая жизнь  
Кавказа», № 5.

Залежи глины в местности Назреви. Там же.

Геологическое описание цементных залежей в окрестностях ст.

## 1923

Закавказье перед соляным кризисом. «Народное хозяйство Грузии», 1 марта, № 9.

Причины подземного пожара в Ткибульских копях. «Народное хозяйство Грузии», 25 марта, № 13.

Чатахский чугунно-плавильный завод. «Народное хозяйство Грузии», 29 апреля, № 18.

К открытию Чатахского завода. «Народное хозяйство Грузии», 20 мая, № 21.

Горное богатство Закавказья. «Труды Зак. эконом. совещания», часть 2, Тифлис.

Мероприятия правительства для дальнейшего развития и использования минеральных богатств в пределах Закавказской федерации (соавтор Л. Коношевский). Там же.

Извержение Этны. «Заря востока», 23 июня, № 142.

Զարքի երկարամբը և գործարքը, «Մարտակու», 20 մայիսի, № 70:

Արագածի ջրերի նշանակուրյունը, «Խորհրդային Հայաստան», 18, 21 հուլիսի, №№ 154, 157:

Հայաստանի «անհողի» բար, «Խորհրդային Հայաստան», 22 հուլիսի, № 158:

Հայաստանի բաղամների բարենորոգումը, «Խորհրդային Հայաստան», 26 սեպտեմբերի, № 213:

## 1924

Угольная промышленность ЗСФСР. «Экономический вестник Закавказья», № 11.

Нелепые слухи. «Заря Востока», 19 февраля, № 507.

Զանգեզուրի Գարար-Կավարտ շրջանի պղնձի հաճեցը և բովանակը, «Խորհրդային Հայաստան», 31 մայիսի, № 124:

Աեմինականի շրջանի նրարխային բարատեսակները և նոցա գործնական նշանակուրյունը, «Բանվոր», 28 մայիսի, № 191, 1, 3, 5 հունիսի, №№ 195, 196, 198:

## 1925

Краткий геологический очерк автономной области Юго-Осетии. Материалы по изучению Грузии. «Труды Зак. научной ассоциации», серия I, вып. I, Тифлис.

Ткварчельское каменноугольное месторождение (геологический очерк). «Краткий обзор матер. по разработке Ткварчельского каменноугольного месторождения», Тифлис.

Медная промышленность Армении. «Заря Востока», 4 марта, № 818.

Наши богатства (о возможностях развития медной промышленности в Грузии). «Заря Востока», 21 ноября, № 1034.

## 1926

Горная промышленность Закавказья. «Экспортные товары Закавказья». Сборник, часть 2, Тифлис.

Плавленый базальт (новая отрасль промышленности в ЗСФСР). «Заря Востока», 20 февраля, № 1108.

Причины и характер ленинаканского землетрясения. «Заря Востока», 19 ноября, № 1332.

Цементные заводы в ЗСФСР. «Заря Востока», 21 ноября, № 1334.

## 1928

Геологический очерк ССР Армении. Материалы по районированию. Вып. I, Эривань.

Երևանի շինարարություններ և գեղողիական սրայմաններ, «Խորեգային Հայաստան», 11 դեկտեմբերի, № 285:

## 1929

Геологическое описание Ахалкалакского уезда. Материалы к проекту Тапараванской гидростанции, намеченою близ селения Хертвиси, Ахалкалакского уезда в ССР Грузии (с приложением геологической карты). Тифлис.

Процентное содержание железа в кровле и подошве каменноугольных пластов, как показатель характера образования их. «Труды З Всесоюзного съезда геологов», Ташкент.

Новейшие вулканические продукты ССР Армении и их практическое значение. Там же.

Յեմենի զգծացման կառուցման նարը, «Խորեգային Հայաստան», 11 մայիսի, № 107:

### 1931

Серноколчеданные месторождения Закавказья в связи с развитием химической промышленности (тезисы и конспекты). «Бюлл. орг. ком-та съезда по изучен. произв. сил ЗСФСР», № 4. Тифлис.

Чираги-дзор (тезисы и конспекты). Там же.

О задачах изучения минеральных источников ССР Армении в связи с ожидаемым развитием курортного строительства (тезисы и конспекты). Там же.

Сырьевая база—узкое место в развитии цветной металлургии промышленности. «Заря Востока», 16 августа, № 224.

Где строить цинковый завод? Свинец, цинк и серебро в ЗСФСР. «Заря Востока», 21 октября, № 241.

### 1932

За комплексное использование всех источников цветных металлов. «Заря Востока», 2 апреля, № 77.

Проект «Ареан» и его значение для Закавказья. «Заря Востока», 22 апреля, № 94.

Հայաստանի հանքային արդյունաբերության նոր աղբյուր, «Խորհրդական Հայաստան», 2 նույնի, № 153:

Գավառի, Կամարվի, Վաղաշապատի շրջանների ջրա-մատակարագման հարցի շուրջը, «Խորհրդային Հայաստան», 8 նույնի, № 158:

Հայաստանի շինանյութերի մի նոր աղբյուր, Անդնականի օպոկները, «Խորհրդային Հայաստան», 18 նոյեմբերի, № 269:

### 1933

Побольше внимания и бдительности к Агараку. «Соцхозяйство Армении», № 2/3 (соавтор Г. Гургенян).

Ավելի մեծ ուշադրություն Ազարակին. «Խորհրդային Հայաստան», 8 նույնի, № 156:

### 1934

Արագած լեռը, Երևան:

### 1935

Цели и задачи геологического института. «Коммунист», 29 июня, № 148.

До конца выявить и использовать производительные силы страны. «Коммунист», 14 июля, № 160.

ՍՈՀՄ գիտությունների ակադեմիայի Հայաստանի ֆիլիալի Երկրաբանական ինստիտուտի նպատակներն ու խնդիրները, «Խորհրդային Հայաստան», 16 հունիսի, № 137:

Հայաստանի բարեր (արդյունաբերության ցուցանիշնեսում), «Խորհրդային Հայաստան», 12 դեկտեմբերի, № 285:

### 1936

Денудационные процессы в Памбакской долине в ССР Армении. «Материалы для геологии и гидрогеологии ССР Армении», вып. I. Москва.

Еще раз о комбинате строительных материалов в Эривани. «Коммунист», 12 июля, № 159.

Արտեզան ջրերի հարցը Հայաստանում. «Խորհրդային Հայաստան», 1 փետրվարի, № 25:

Գրի-Բուլաղի աղբյուրների չույր շատացնելու հնարավորության մասին, «Խորհրդային Հայաստան», 22 փետրվարի, № 43:

### 1937

О характере и причине землетрясения г. Еревана и его районов 7.I.1937 г. (тезисы доклада). «Труды 17 сессии Международного геологического конгресса», т. 5, Москва.

Естественные минеральные стройматериалы ССР Армении (тезисы доклада). «Материалы к I Закавказской конференции по бетону и железобетону». Сборник № 2, Тифлис.

О сейсмостойкости сооружений Еревана. «Коммунист», 26 января, № 20.

Горные богатства Армении. «Коммунист», 16 октября, № 238.

Вопросы горной промышленности в третьей пятилетке. «Коммунист», 22 ноября, № 267.

Երևանի գրունտի հատկությունները և շինարարությունը, «Խորհրդային Հայաստան», 15 հունվարի, № 12:

### 1938

Главные минеральные источники Армянской ССР в связи с развитием курортного строительства. «Материалы по геологии и гидрогеологии Арм. ССР», вып. 3, М.—Л.

Где строить цементный завод? «Коммунист», 16 июня № 137.

Аbrasивные и подсобные материалы в Армянской ССР. «Коммунист», 10 августа, № 183.

Алагез (по поводу «Алагез—не вулкан» К. Н. Паффенгольца) «Коммунист», 27 сентября, № 223.

1940

Անդրականի շրջակայի օգտակար հանածոները, «Թամվոր», 13 սեպ-  
տեմբերի, № 214:

1941

О возможности и необходимости организации и производства в Армении известково-пуццоланового цемента. «Известия АрмФАН», № 1 (6).

О возможности увеличения дебита Крхбулагских источников Котайского района Армянской ССР. «Научные труды Ер. гос. университета», т. 17.

О возможностях сырьевой базы алюминия в Армянской ССР. «Коммунист», 20 марта, № 66.

1942

Памбакские гранодиориты Армянской ССР. «Известия Арм. ФАН», № 6 (20).

1944

Мецдзорское месторождение медно-мышьяково-оловянных руд. «Известия АН Арм. ССР», естественные науки, № 1—2. (Соавтор И. Г. Магакян).

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ  
ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՈՎԻՉ ԱՎԱԿՅԱՆ

ԵՐԿՐՈՒԹԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տպագրված է Հայկական ՍՍՀ ԳԱ  
Բնագիտության և տեխնիկայի պատմության  
խորհրդի ոռոշմամբ

Հրատարակչական խմբագիր Լ. Ա. ԽԱՉԻԿՅԱՆ  
Նկարիչ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ  
Տեխնիկական խմբագիր Մ. Ա. ԿԱՓԱՆՅԱՆ  
Սրբագրիչ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վ.Ֆ. 08788      Պատվեր 632      Հրատ. 4274      Տպաքամակ 1000

Հանձնված է շարվածքի 16.IX 1975 թ., ստորագրված է տպագրության  
13.IX 1975 թ., տպագրական 4,25 մամոլ, նրան. 2,8 մամոլ, պայման  
3,6 մամոլ+1 զերտիք, թուղթ № 1,  $84 \times 1081/32$ ; Գինը 28 կուգ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ Բրատարակշություն, Երևան, Բարեկամության 24գ;  
Издательство Академии наук Армянской ССР, Ереван, Барекамутян, 24г.  
ՀՍՍՀ ԳԱ Բրատարակշության Երևանի տպարան

1666

